Զուր կամ զինի խմելէն առաջ և յետոց  
բերանը սրբելու է:

Ենթանին մէջ կերակուր եղած միջոցին  
պէտք չէ խմել:

Խմելու ժամանակ պէտք չէ կոկորդէն ան-  
ձոռնի ձայներ հանել:


Եյնպէս շտապելով պէտք չէ խմել, որ  
կէմ այլ պոկոնքին Երկու կողմէն կուրծքին  
վերայ թափի:

Պատառովը կերակուրին ամանը պէտք չէ  
սրբել, վասն զի այս որկըամոլ մարդու նշան է:  
Եյսմասին Քառթիշեօնի հեղինակը հետագայ դի-  
պուածը կպատմէ. Մանզուայի Մարգեղը քանի  
մի ազնուականներու հետ սեղան նստած լինե-  
լով՝ ապուրը լմինցընելէն յետոյ՝ արհուականաց  
մէկը „Թաղութիւն կանէք“ առելով, ամանը  
կիւրցընէ ու աւելցած ապուրը կը խմէ: Մար-  
կեզը պատասխան կուտայ թէ „Եյդ քանը  
ինձի միաս չունի. Խոզերէն թողաթիւն ազէ:

առանձ պիտականեան մաս ունեն Դի սպառ!»—

25.

Հայութ վկան վարդի՞ ըստու<sup>ւ</sup>  
(Ը. Ա. Ա. Գ.)—Գ. Ա. Յ. Եւ Գ. Ա. Խ. .



Գայլն ու Գառը մէկմէկու չտեսած՝ մէկ  
վազուկ առուակէ ջուր կը խմէին։ Գայլը ա-  
ռուակին վերէն վար նայածին պէս՝ Երբ աչքովն  
ընկաւ Գառը, խսկոյն նորա քովը վազեց ու  
„Ինչո՞ւ համար խմելու ջուրս պղտորեցիր, ասաց։

— Ջուրդ ի՞նչպէս կը նամ՝ պղտորել, պա-  
տասխանեց Գառը դոդարով, Երբ Եկած տեղէդ  
ամ վարէն կը խմեմ։ Հաւատաչ տէր խմ, որ  
նոքէս անդամ անցած չէ քեզի դէմ յանցանք  
մի գործել։

— Եփցարք թէ առածդ շիտակ լինի, կրկնեց  
Գայլը, բայց այդու ամենայնիւ գու չեմ կա-  
րագ արդարանալ, մանն զի երեկ հայրդ խր ձայ-  
ներովը կյորդորէր շներուն որ ինձ հալածեն։

— Եմիսէն աւելի է, պատասխանեց Գառը,  
որ մասվաճառը հօրս մորթեց։

— Արեմն այն մայրդ էր, ասաց շեշտելով  
գաղանք։

— Մայրս իմ ծննդեան ժամանակը մեռաւ,  
ասաց հեղութեամբ Գառը:

— Ուրեմն աղգականներէդ մէկն եղած է,  
կանչեց վճռողաբար Գայլը, աւելցընելով՝ թէ ես  
այսքանս հաստատ զիտեմ, որ դուք ձեր հո-  
վիւներովն ու շներովը, ամենքդ թշնամի էք  
ինձի, և եթէ ձեռքերէդ զայ՝ արիւնս անգամ  
կը խմէք. ուստի հարկ է որ ես այլ վրէժս քեզ-  
նէ հանեմ որ սիրտս հանգչեա անելով, անմեղ  
Գառնուկին քաշեց անտառը տարաւ ու այն-  
տեղ մրմրուալով կերաւ:

## 26.

ՆԿԱՐԱԳԻՒՐ ՄԱՔԲԱՍԻՐ ԱՃԱԿԵՐՏԻ.

Լաւ զիտնալով որ մարդուս մարմնոյն ու  
հագուստին մաքրութիւնը՝ շատ անգամ հող-  
ւոյն մաքրութեան նշանն է, մաքրասէր աշա-  
կերտը միշտ գլուխը սանտրած, հագուստները  
սրբած և կօշիկները մաքրած կպահէ: Վմե-  
նայն առաւօտ սապօնով կլուացուէ, և կը-  
նայէ որ երեսը, վիզը, ականջներն ու ձեռքերը  
պէտք եղածին չափ մաքրուր լինին. և եղունդ-  
ները, թէ որ երկրնցած են, — կտրուած:

Օրը երեք անգամ բերանը ջրով կլուանայ-  
նախ առաւօտը, որ զիշերուան ծանր հոտը

երթայ. Երկրորդ՝ կերակուրէն յետոյ, որ կերածին հոտերը գիմացինի երեսին չբռւրէն, և Երրորդ՝ պառկելէն առաջ, որ աւելի հանգիստ քնանայ:

Առվորական բան արած կլինի իրեն մաքուր թաշկինակ գործածեն ու հագուստի և զլիսարկի փոշին միշտ վրձնով մաքրելը:

Գիտնալով որ աղաստութիւնը շատ տեսակ հիւանդութիւններու պատճառ կլինի, գոնէ ամիսը մէ՛կ անգամ բաղնիք կերթայ: Իաղնիքէն եխելէն վերջն այլ շուտով հագուիլ կփութայ, որ պաղ չառնու և չբմրսի: Վերակուրէն վերջը իսկոյն բաղնիք երթալը շատ վնասակար լինելով, երկու երեք ժամ չանցած՝ երբեք բաղնիք չերթար:

Վմառը գետի կամ ծովի մէջ լուացուիլը բաց ի մաքրութենէն օգտակար ևս լինելով, ապահով տեղ կրնտրէ լուացուելու և կամ (թէ որ կայ) հասարակաց լուացարանը կերթայ, որ խղղուելու վտանգէն ազատ մնայ:

Տաքցած ու քրտնած ժամանակ երբեք ջուրը չի մտներ, այլ կսպասէ որ քիչ մի զովանայ: Ջուրը մտնելուն պէս՝ մէկէն բոլոր մարմնովը մէջը կրնկղմուի ու յետոյ անշարժ չի կենար, այլ կլողայ և ուրիշ շարժմունքներ կանէ: Քառորդ ժամէն աւելի չի կենար ջրին մէջ. եխելէն ու հագնուելէն վերջն այլ՝ փոխանակ հան-

գիստ նստելու, կամաց կամաց քայլելով՝ թէթէ շարժումն կռւտայ իւր զովացեալ մարմնոյն, որ աւելի օգտակար լինի իրեն լուացման գործու դութիւնը:

Վնքք թէպէտ զգոյշ կկենայ խղղուելու վրանգներէն, բայց միշտ կյիշէ խղղուած տղայոց պատմութիւնը, որք կամ քրտնած եղած ժամանակը, կամ կերակուր ուտելէն անմիջապէս յետոյ ջուրը մտած են, և կամ անխոչեմութեամբ վտանգաւոր տեղեր լուացուիլ ու լողալ ուզած են:

27.

ԱՊԵՔՄԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

Վակեղոնացւոց Փիլիպոս թագաւորի որդին էր Սղեքսանոր, որ ծնաւ Քրիստոսէ 356 տարի առաջ, և 20 տարեկան ժամանակը հօրք տեղն անցնելով՝ քաջութեամբ տիրեց Յունաց քանի մի դաւառներուն ու շուտով զօրացաւ: Հետոյ 35 հազար զօրք ժողվելով՝ պատերազմ բացաւ Պարսից Դարեհի թագաւորին դէմ, որոյ զօրքն էր 600 հազար. և նախ յաղթեց Աֆլիկիայի կողմերն ու տիրեց Դարեհի զանձին, և դերի բռնեց նորա մայրը, կինը, որդին ու երկու աղջիկները, և հրամայեց պատուով պահել նոցա: Եւ ապա յառաջ երթալով՝ տիրեց Տիւրոսի, և դնաց կրուսաղեմի վերայ, որ

Յաղգելք քահանայապետն զգեստաւորուած դիմացն ելաւ ու ցուցուց Դանիելի մարդարէութիւնը, որ գուշակած էր Եղեքսանդրի յաղթութիւնը Պարսից դէմ։ Յետոյ գնաց առաւ Եղիազար, ուր Եղեքսանդրիա քաղաքը շինեց իւր անունով։ ‘Եոյն միջոցները Դարեհ խեղճութեամբ արեհը քաշուած կջանար որ Եղեքսանդրին հետ հաշտութիւն անէ՝ իրեն ուզածին սկէս, բայց նա չկամեցաւ, որով նոր պատերազմ սկսաւ և Եղեքսանդր բոլոր Պարսից տիրելով՝ փառաւոր յաղթանակաւ Շարիլոն մտաւ։ Եղեքսանդր կուզէր կենդանի բռնել Դարեհին, բայց երբ տեսաւ որ Պարսիկ զօրավարներէն վիրաւորուած մեռնելու վերայ էր, շատ ափառաց, և իրեն վերարկուովը փաթըթեց ու մօրը զրկեց որ իւրեանց օրէնքովը թաղեն։ Եյնուհետեւ առաջ երթալով՝ Եղեքսանդր բոլոր Եսիայի աշխարհներուն տիրեց մինչեւ Հնդկաստան, ուսկից պարծանօք դարձաւ ի Շարիլոն։ Եղեքսանդր քաջութենէն զատ՝ մարդասէր, ուսումնասէր և աշխարհաշէն էր։ Վաճառականութիւնն ու գիտութեանց արուեստը ծաղկեցրնելու համար 800 արծաթ տաղանդ (50,000 բուրլի արծաթ) յուղարկեց իրեն վարժապետ Երիատոտէլ փիլիսոփային, որ բնական տեղեկութեանց և քննութեան կենդանեաց հետեւ։ Հնդհանրապէս Եղեքսանդրի վարուց մէջ շատ

երևելի գործեր ու բարոյական խմաստալից խրատներ կպատմեն։ Ճնութեամբ անվախ ու համբերող էր. մեռաւ Վրիստոսէ 324 տարի յառաջ, երկու օրդի թողլով, մէկը խորթ՝ Հերքիւլէս անունով, և միւսը հարազատ, որ դեռ Հոռքսանիա թագուհւոյն արգանդին մէջն էր, և ծնուելէն յետոյ հօրը անունովը Եղեքսանդր անուանեցին։

## 28.

ՀԱՅՈՑ Վ. Շ. ԹԵՂԱՄՈՒԽՆ ՄԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

Կպատմեն թէ Եղեքսանդր Վակեդոնացի աշխարհակալ թագաւորը երբ մեր Վահէ թագաւորին յաղթելով Հայաստանի տիրեց, հրաման տուաւ զօրաց որ Հայոց մայրաքաղաքը կողոպտեն։ Վահէի սիրտը չդիմանալով այն ողբալի տեսարանին. գարձաւ առ Եղեքսանդր ու „Առքա ի՞նչ կանեն. ասաց.—Չե՞ս տեսներ որ քաղաքդ ու ստացուածքդ կկողոպտեն։—Կը սիսալիս, տէր արքայ, պատասխանեց Վահէ, պատերազմի իրաւունքովը ամենայն բան քուկդ լինելով՝ այտուհետեւ ես այս տեղ բան չունիմ. ուստի ինձի այնպէս կերեի որ քու ստացուածքդ կկողոպտեն։“ Եյս ճարտար ու խոհեմ պատասխանին վերայ զարմացաւ Եղեքսանդր և հրաման արաւ որ կողոպտումը դադրեցընեն։

ՀՅ.

## ԱԹՈՒՐԻ ԱՎԵՐԱԿԻ ԵԽ ԿՈՎՃՐԱՎ.



Քաղցած Եղուէսուկն ինչ արաւ չարաւ  
Մէկ այդի<sup>(1)</sup> մըտաւ,

Տեսաւ որ խազողները

Խուզ կուզ կախուած կը վառին.

Եղուէսուկն ոչ թէ միայն աշբերը,

Եկուաներն ալ կրտկ առին,

Կուզերն որ ասես, մէկմէկէ հասուն,

Մէկ մէկ յակինթի<sup>(2)</sup> նըման պըսսլզուն:

Ինչ եր՝ գիտես՝ ցաւալին,

— Խուզերը խիստ բարձր էին :

Մեր Եղուէսուկը շատ աշխատեցաւ,

Ա եր-վար ցատքրտեց, չորս դին ման եկաւ,

Չընար չըգըտաւ.

Մէկ կուզ մըն ալ փըրցընել չըկըցաւ.

Ար տեսնէին աչուզները,

Չէին հասներ ակուաները:

Եմբողջ ժամկն աւելի

Խղուր տեղը կը յողնի,

Կելնէ կերթայ բանն ու կանէ.

(1) Առաջ և աջ, աճ. բաշ.

(2) Առաջ և աջ, աճ. է ազնիւ կազմուա քար.

„ԽՇ ի՞նչ կայ,  
Տեսքին նայիս նէ զէշ չէ,  
Տայց ինըը զեռ կանանչ է.  
Չես զբաներ մէջը և ոչ մէկ հատիկ  
Հասուն խաղողիկ,  
Ուստի թէ ուտես առամըդ կառնէ  
Եւ այնքան զառն է որ սիրու կը խառնէ“:

## ՀՅՕ.

## ԱՍՏՈՒԱԾ Է՞Ն 2 է.

Կպատմեն թէ Համազասպ Մամիկոնեանի  
Գրիգոր եղբայրը (որ Մըշակունեաց թագաւորութեան վերջանալէն յետոյ, Քրիստոսի  
659-էն մինչև 685 թուականը Դամասկոսի  
Մատիէ ամիրապետէն պատրիկ դրուած էր  
Հայոց վերայ) կրօնական ինսդիրներու մէջ  
մասնաւոր հետաքրքրութիւն ունենալով՝ մէկ  
օր հարցուց Ենանիա վարդապետ Շիրակացւոյն(1)

(1) Եօմներորդ դարու Հայոց պիտուակն վարդապետներէն մէկն էր Անահիտ Շիրակացին, որ գնաց Տրապիզոնի Յաւնաց ուսումնարանը, և այնուզի Տէտիստ անունով հաշուկաւոր վիճիսափայէն չափարանական զիստով ինչ սովորելով՝ դարձաւ ի Հայաստան, որ սկսաւ ուսումը ծաղկեցնել, երեկի ոչափերաներ հանելով և պիտուակ զբար չարագրելով, այսինքն 1) Քերականութիւն, 2) Աստղագիտութիւն, 3) Ասան որսիք-սութեան կենաց իւրոց, 4) Յաղագու զշշման և արտասուաց, 5) Ասան կշռոց և վասն չափուց, 6) Յաղագու խնարհութեան, 7) Պատումութիւն և ժամանակապրութիւն խոսն(1) և այլն, որոնք Գրիգոր մայստրոսու ընդ հանրապէս կրովէն Յայէնանէս պատմարան կամ թողիկուն ևս կատ թէ Անահիտ կամ ողիկուն ուղելով որ Հայոց տամարն ևս ուրիշ ազգաց տամարներուն ոչէս անշարժ լինի, Անահիտին յանձնեց 667-ին Հայոց տամարին նորագութիւնը. բայց Կամ ողիկուն մահը վերայ հանելով՝ բազմանքն ու զրծագրութիւնը անկատար թաց(1).

թէ „Աստուած ի՞նչ է“: Ծիրակացին մէկէն ի մէկ պատասխան չտուաւ, այլ չայոց մեծ իշխանէն ինդրէց որ մէկ օր ժամանակ տայ իրէն մտածելու: Մէկ օրէն յետոյ՝ երկու օր ժամանակ ուզեց Ծիրակացին. Երկու օրն որ անցաւ, չորս օր ժամանակ ուզեց, յետոյ ութօր, և այսպէս ամենայն անգամ առաջինին կրկնապատիկը ժամանակ ուզեց պատասխանելու համար: Գրիգոր պատրիկը զարմանալով Ծիրակացի գիտնական վարդապետին այս բանիս մէջ բռնած ընթացքին վերայ, մէկ օր հարցուց թէ „Ի՞նչ է միտքդ, որ այդպէս կանէս:

—Որքան որ կը մտածեմ Աստուծոյ վերայ, պատասխանեց Անանիա, այնքան անիմանալի և անքննելի կը գտնեմ իւր էութիւնը. ուստի և կարողութենէս վեր կտեսնեմ իմանալը թէ ի՞նչ է Աստուած: Բայց այսքանս միայն կասեմ, աւելցուց Ծիրակացին, որ Աստուածն է ամենայն բանի Արարիչ կամ Ատեղծողը. իւր հայրական ողորմութեամբն է որ մինչեւ այս վայրկեանս կապրիմք և այնչափ բարիք վայելեր եմք ու կվայելեմք“:

սէպի և մշակող 21. ծառաւ ան  
 են ըստ ՏԵՐՈԽԵՎԱՆ ԱԴՅՕՔ:  
 Հայր մեր որ յերկինս ես, առոքք եղիցի  
 անուն քո, եկեսցէ արքայութիւն քո. եղիցին  
 կամք քո որպէս յերկինս և յերկրի: Օհաց մեր  
 հանապակորգ տուր մեզ այսօք թող մեզ  
 դպրաքիս մեր, որպէս և մեք թողումք մերոց  
 սպարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձու-  
 թիւն, այլ փրկեան զմեզ ի չարէն: Օք քո է  
 արքայութիւն և գօրութիւն, և փառք յարի-  
 տեանն. ամէն: մշակող նիւ ծառաւ ան սի-  
 ուն Եյս „Հայր մեր“ աղօթքը այն պատճառա-  
 Տէրունական կասուի, որ Քրիստոս Տէրն մեր  

 , կայդի կածառաւ և ի մազցի:—  
 Ոյսամահեմա մասք ու պահուածու ըստախուասար  
 վասու. քա՞նի նկատ ու գետ զմանցին և  
 չեն զբանակ նկատ ու համ նվազուայ և  
 նկառք մրցի ու պահուածու պահապատ և քանի  
 մաս է մծա ու պահուածու պահապատ և քանի  
 ըստ զայ գրանցաւու և գուգալու ի հանդ մաս  
 զըստ սկս և մահի ու պահուածու պահապատ մաժան  
 գետ զմեմակ զմուա պահապատ և զեմուա սմբամ  
 սովորեցուց իւր առաքելոցը և սոքա մեզ աւան-  
 դեցին: Եյս աղօթքը ամենն աղօթքներէն  
 գերազանց կհամարուի. վասն զի Եստուծմէ  
 ինչ որ պէտք լինի մեզ իննդրել, ամենուն ևս  
 սքանչելի բովանդակութիւնը մէջը կայ:

32.

ՏԵՍԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՔ ԷՍՏՈՒԾՈՑ.



Եսուսած, Անա լեռան վերայ, Մովսէս  
մարդարէին ձեռքովի՛ երկու քարեղէն տախ-  
տակներու վերայ՝ տասը պատուիրանք կամ տասը  
բարոյական օրէնք տուած է մեղ, որ սոքա են.

1.) Ես եմ՝ Տէր Եսուսած քո. մի՛ եղեցին  
քեզ այլ աստուածք բաց յինէն:

2.) Մի՛ արասցեա կուռա:

3.) Մի՛ առնուցուս գանուն Եստածոյ քո  
ի վերայ մնոտեաց:

4.) Յիշեա սրբել զօր շաբաթու:

5.) Պատուեա դհայր քո և զմայր:

6.) Մի՛ սպանանեթ:

7.) Մի՛ շնար:

8.) Մի՛ գողանար:

9.) Մի՛ առւտ վկայեր:

10.) Աի ցանկանար տան ընկերի քո, և մի՛  
ամենայնի զոր ինչ ընկերի քո իցէ:

Եսուսած այս տասը պատուիրանքը  
տալով, կհրամայէ. 1) Ար իրմէն ի գատ՝ ուրիշ

աստուած չճանչնամք. 2) Որ կուռք (այսինքն քարէ կամ փայտէ կամ այլ նիւթերէ շինուած պատկերներ) չպաշտեմք, 3) Որ ոչինչ բաներու համար Ծատուծոյ անունովը երդում չանեմք. 4) Որ շաբաթ օրերը սուրբ պահեմք (\*). 5) Որ պատուեմք սիրով և հնազանդութեամբ ոչ միայն մեր մարմնաւոր, այլ և հոգեւոր ծնողքը, այսինքն մեր վարժապետներն ու բարերարները. 6) Որ պատճառ չլինիմք մեր կամքով՝ ոչ մեր և ոչ ուրիշի մահուանը. 7), 8) և 9) Որ շնութիւն ու գողութիւն չանեմք և սուտ բանի վկայ չլինիմք:

## 33.

ՄԱՐԴՈՒՄ ԲԱՐԵԿԱՄՔԸ ՄԵԽՆԵԼԵՆ ՎԵՐՁԸ.

Ճամանակով Մահակէնէ Պատաստար անունով բարեպաշտ քաղաքացիին մէկը՝ հետագայ բարոյական պատմութիւնը կասէր իւր սիրելի որդւոցը. „Թագաւորին մէկը՝ մէկ հեռաւոր քաղաքի մէջ մարդուն մէկուն կուսակալ կամ կողմնապահ դրած լինելով, ժամանակն եկաւ որ այն կուսակալը ծառայութեան հաշիւը տայ իւր հրամանատարին. ուստի և հարկադրեցաւ անձամբ երթալու իրեն։ Այն բարեկամներուն,

(\*) Հին օրէնքով շաբաթ օրերը հանդտուեն որ կհամարուէին . բայց Քրիստոսի Յարութիւնը միալստաթի օրը պատահելով, Քրիստոսի Համբարձունենէն յետոյ ուսութեալ ները առհմանեցին որ փխանակ շաբաթ օրուան միալստաթի օրը պահեմք իրեն հանգստանաւու օրը Այս պատճառաւ միալստաթի օրուան անունը յանուրէն լեզուաւ իւրցին կուեցին, որ Տերուածուն չը կը նշանակէ։

որոց վերայ կուսակալն ամենէն աւելի յոյս  
դրած էր, թէ նոցա մտերմութեանց ու սիրոյն  
և թէ նոցա հաւատարմութեանց ու անձնաւ-  
նուիրութեանց վերայ, տեղերէն անդամ չշար-  
ժեցան, որ ճանապարհ ձգեն գոնէ մինչև ի  
նաւը, որով պիտի երթար կուսակալը:

Վիւսները, որք առաջուց վստահացուցել  
էին նորան իւրեանց բարեկամութեան վերայ,  
և երդուել էին շատ տեղ այն կուսակալին  
հարազատ մնալու, ճանապարհ ձգեցին մինչև  
նաւը: Ճնդհակառակն նոքա, որոց վերայ քիչ  
կամ ամեննեին համարմունք չունէր, նորա հետը  
մէկտեղ ճանապարհ ելան և գնացին մինչև  
թագաւորանիստ քաղաքը, յորում և խօսեցան  
ոչ միայն յօգուտ նորա, այլ և միջնորդու-  
թիւն անելով՝ աղաչեցին որ թագաւորն ողորմէ  
իրեն<sup>4</sup>:

Տղայքը չհասկացան այս պատմութեան  
միտքը. և մահտեսի Պաղտասարն այսպէս մեկ-  
նեց. „Վարդս երեք տեսակ բարեկամ՝ ունի  
աշխարհիս վերայ, որոց նա այն ժամանակը  
միայն կկարողանայ ճանաչել, երբ աշխարհս  
թողլով՝ կհարկադրուի երթալ հաշիւ տալ  
երկնաւոր թագաւորին, իւր անցաւոր կենաց  
գործառնութեանց մասին:—Առաջին բարեկամ-  
ները, որոց վերայ ամենէն աւելի վստահացած  
էր կուսակալը, նորա ունեցած դրամական

Հարստութիւններն ու անշարժ կալուածներն են, որք իւրեանց տիրոջը ճանապարհ ձգելու համար ամենեն տեղերէն չշարժեցին։ Երկրորդ բարեկամներն են՝ նորա աղբականներն ու բարի ծանօթները, որք ճանապարհ ձգեցին նորան գոնե մինչև զերեզման։ Կակ երրորդ բարեկամները — նորա բարեգործութիւններն են, որք իրեն հետ մշկտեղ երան գնացին մինչև թագաւորին թագաւորաց յաւիտենական Ըժոռը։ Այս, մարդուս բարեգործութիւններն են որ կմիջնարդեն Եսաուծոյ առջև, վասն զի մարդու իւր գործոց համեմատ հաստոցումն, այսինքն պատիժ կամ պարգև կրնդանե։ Եսաուծուն ։ Դասույն, զգարաց ուժնադուարան ուրբանին և լաւ ազն ուրբայ մազին չո մայուս մզ տարած ու օդը արա իրամա մայն ։

## 34.

Ամաններն են բարդութ բնաւութ պարագաներն ։

Այն աշակելան է զովութեան արժանի,  
• Որ հաւատոյ նիւթեր սիրով ուսանի,  
Եղաթք անէ առոտու իրկուն մրտադիւք,  
Ատեպ առ Եսաուած դարնոյ փափար և միար իւր։  
Ամեն իրկուն միշէ զբարիսն Եսաուծոյ,  
Իրմէ խընդրէ շնորհը և նըպաստ իւր գործոյ։  
Յեկեղեցին միշտ է պարկեշտ պատկառոտ,  
Զամեր մրտքէն աղօթքս լինէր համառօտ։  
Յըրուած մրտքով ասղիս անդին չմ նայիր, զիմն  
Տիմալով թէ կայ սիզով կրէնի ունկընզիւր։

Օր չանցըներ որ չքյիշէ հայրն ու մայր,  
թէ ողջ լինին յաստիս և թէ յայն աշխար:  
Նոցա խօսքէն զուրս ոչ երբէք նա կելնէ,  
Նոցա կամքին հաճոյանալ ջանք կանէ.  
Նոցա խորհուրդ կը հարցընէ միշտ սիրավ,  
Ոչ երբէք սուտ կատէ և ոչ կայ խըռավ:

Տան զիսպուածոց վերայ երբէք չի խօսիր,  
Օրնողաց դէմ ուրիշներուն չի գանգտաիր,  
Նոցա ցաւին բոլոր սըրտանց ցաւակից,  
Եւ խընդութեան միշտ կըլինի խընդակից:

Խշարցն ու քերց սէր ցուցանէ կաթողին,  
Երմով պարծին, իրմով և վիշտ ըսփոսին,  
Ատէալ թուզը դրբէ նոցա սիրոյ կամ խրառա,  
Հըտայ տեղի սըրտին մէջ չար նախանձու:  
Կրոիւ չաներ նոցա հետ նա բընաւին,  
Թէ վէճ բացուի, կաշխատէ որ ցուտ հաշտուին:  
Եզզականաց ոչ երբէք նա կանարգէ,  
Եյլ նոցա սէրն ու երախտիք կը յարգէ:

\* \*

Խւր մեծերուն խօսքէն բընաւ զուրս չմըներ,  
Միշտ անտըրտունջ կը կատարէ իւր պարագեր,  
Ոչ կամապաշտէ, ոչ յամառ և ոչ բիրա,  
Եյլ իրրե մոմ կակուղ է խօսք իւր և սիրա:  
Պարժապետաց արդինքն ու սէր կըճանշնայ  
Եւ կը նայի որ նոցա աչքը մըտնայ.

Թէ խըստութիւն ևս անեն՝ ոխ չիպահեր,  
Նոցա խօսքն ու վարը բընաւ չարհամարհէր:  
Խթէ խրատեն՝ չիտար բնդդէմ պատասխան,  
Եյլ սիրով կընդունի ինչ պատիժ տան.  
Պարպետներուն հետ վախնալով չի վարուիր,  
Եյլ միշտ պատուալ, միշտ համերձակ սիրալիր:

\* \*

Չէ մարդատկաց և ոչ քաշուող մինակեաց,  
Օքւարիթ բնութեամբն է սիրելի ընկերաց:

Ուրիշի սիրտ նա ոչ երբէք ցաւցընէ ,  
 Ի՞նչ բարիք որ կուզայ ձեռքէն միշտ կանէ :  
 Եղնիւ բարբոյ ընկերաց հետ ընտանիի ,  
 Եւ ոչ մէկուն հետ պաղ վարմունք՝ ոխ ունի .  
 Քաղաքավար , ներողամիտ , քաղցրախօս ,  
 Ոչ առնըւող , ոչ սէգ և ոչ սրտախօս :  
 Ուրիշներու խօսակցութիւն չի կը որսէր ,  
 Եւ մըտքերնին յանդրգնարար չի դատեր .  
 Դուրս չի հաներ ուրիշներու պակսութիւն ,  
 Ըստ կուտայ իւր դէմ եղածին թողութիւն :  
 Միշտ կը խորշի հրամայական կերպերէն ,  
 Եւ ստէպ ըստէպ ծաղրածութիւն անելէն .  
 Շըշմարտութեան վերայ սերտ սէր կունենայ ,  
 Տըրուած խօսքէն ոչ երբէք յետ կը կենայ :  
 Կեղծաւորիլ , շողոքորթել , սուտ խօսիլ ,  
 Ո՛չ , ոչ երբէք , լաւ կը սեպէ նա մեռնիլ  
 Քան խոտորիլ արդարութեան շաւիղէն ,  
 Եյլոց անել զոր չուզեր այլը իւր անեն :  
 Զի բըռնանար փոքրիկ եղբարցը վերայ  
 Եւ ոչ մէկուն խորհուրդ կամ խրատ չար կուտայ .  
 Ուրիշներու բանին շընիր ինքը տէր ,  
 Ի՞նչ որ զըտաւ իրեն բովը չի պահեր :  
 Վորիթ կուզէ բարիք անել ուրիշի ,  
 Եւ ոչ երբէք չարիք կանէ ընդ չարի .  
 Պատկառանօք պատիւ կուտայ ծերունեաց ,  
 Եւ ցաւակից կընի դժմբաղդ արկարաց :  
 Ո՛չ անձընդիւր է ոչ փընտող իւր շահին ,  
 Ունեցածէն այլը ևս ունին միշտ բաժին .  
 Ժիր և արադ յամեն պարառոց կատարման ,  
 Կա չանցըներ պարապ և ոչ մէկ վայրկեան :  
 Ո՛չ շափաղանց շուտ , ոչ չափէ դուրս դանդաղ ,  
 Եյլ ըստ կարգին կանէ զործերն անյապաղ :  
 Դասի ատեն խեկը վերան կը պահէ ,  
 Զըհասկացած բանը նորէն կը հարցնէ :

Եռողջութեանը վերայ լաւ հոգ ունի .

Միշտ կը ջանայ տեղեակ լինիլ շատ բանի .

Աւրիշներէն վար չի մընալ կը նայի ,

Եյլ մանաւանդ անցնիլ նոցա կաշխատի :

Ո՛չ յանդուղն է և ոչ վախկոտ, այլ խոչեմ ,

Ըզգուշաւոր, բայց և արի վտանգի դէմ ,

Ո՛չ նրկատմամբ մարդկանց՝ պարտքէն յետ կենայ ,

Ո՛չ բարեփաշտ երենալէն կամըշնայ :

Չի յաղթւիր չար օրինակէ՝ չար խրատէ ,

Կ'նչ որ ձանչցաւ մէյմը թէ զէշ է՝ կատէ .

Վստուծոյ սուրբ կամացն է միշտ համաձայն ,

Համբերութեամբ կը տանէ վիշտ ամենայն :

Աը համբերէ ուրիշնելու թերութեանց ,

Գիտէ որ ինքն այլ տըկարութեամբ է զգածուած .

Խոնարհամիտ է և համեստ ու ցածուն ,

Ծատ չի խօսիր ինքն իւր վերայ ամենուն :

Չի պարծենար խելքին, տեսքին, ըստակին ,

Գիտէ թէ ստոյդ մարդուս արժէքն է նելքին .

Չափ կը ձանչնայ ամեն բանի հարկաւոր ,

Իշանը չարած՝ կը մըտածէ վերջն անոր :

Մարդըս կուտէ որ ապրի, այս լաւ գիտէ ,

Ո՛չ թէ կապրի նորա համար որ ուտէ .

Ուստի իրեն պարզ կերակուրն ամեն տեղ

Քնէ բաւական կերենայ միշտ թէ համել :

Կ'նչ որ կանէ, կանոնով է ու կարգով ,

Իռողը զըրքերն ու թըղթերն են լաւ շարքով .

Ալբան զըրտւին է միշտ մաքուր և կոկիկ ,

Դան զմաքրութիւն չի ձանչնար զարդ գեղեցիկ :

35.

Գ-ԱՊ. Վ-ԱՍՏԵԽԻ Գ-ԵԳ. Ա-Մ ԱՐԴԻՒՆԻ

Վասակ անոնտվ գեղացիին մէկը սովորութիւն արած էր դրացիին արտն Երթալ ո ցորեն զողանալ։ Այս մէկ օր իւր տասը տարեկան որդուն ևս ուղելով ցուցընել թէ տուն տարած ցորենն ուսկից կրերէ, տոպրակը տղուն ձեռքը տուաւ ու երբ արտի մէջ մնաւ, սկսաւ ասդիս անդին նայել որ արդեօք տեսնող կայ թէ ոչ։ Լաւ նայելէն յետոյ՝ երբ տեսաւ որ մարդ չկայ, տոպրակն առաւ տղուն ձեռքէն և սկսաւ շուտ շուտ իւր մեղանչական վաստակին ձեռք զարնել։

„Հայր, ասաց Գեղամ՝ որդին սարսափելով, մէկ տեղ ալ մնաց որ մոռացար նայելու“։ Մարդը փախնալով տոպրակը գետինը ձգեց ու հարցուց կասկածանօք, „Ո՞ր կողմը, տղայ“։ կարծելով թէ մօտերը տեսնող մարդ կայ։ — „Դէպի Երկինք նայելու մոռացար, Հայր, որ իմանայիր թէ Աստուած արդեօք չի տեսներ“։

Եյս Աստուածավախ տղուն յանդիմանական խօսքը այնպէս ներգործեց իւր հօք սրտին վերայ, որ պարապ տոպրակն առաւ, շրւտով տուն դարձաւ ու միւսանդամ գողութեան չդնաց, միտքը պահելով այս ճշմարտութիւնը, որ իւր որդիէն սովորեցաւ թէ Աստուծոյ ամենասես աչքը միշտ կտեսնէ մեղ ու մեր արած ըարի և չար գործերը։

36.

(Ա.Օ.Ը.Կ)-ԾՈՒՆ ԵԽ ՍՏՈՒԵՐ (1).



Հունին մէկը մսի կտոր մի խածած՝ գետէն լողալով անցնելու ժամանակ՝ մսին շուքը ջուրին մէջը տեմնելով, կարծեց թէ ուրիշ որսի հանդիպեցաւ. ուստի շուտով թողուց իւր բերանի միսն ու շուքին ետևէն վազեց։ Բայց շատ զղջացաւ արածին վերայ, երբ տեսաւ որ երկուօտէն առ զրկուեցաւ, որով ստուգեցաւ այն խօսքն որ կասեն թէ

“Եզաշն որչափ շատին ցանկայ,  
Եյնչափ աղքատ խեղճ իլ ինայ”։

37.

ԳԻՒՂԱԿԱՆ ԵԽ ՆԵՐԱԾՈՒՅԻ

Խեղճ զեղացիին մէկը մեծ դաշտէ<sup>(3)</sup> մի անցնելու ժամանակ՝ թուփին<sup>(4)</sup> տակը մէկնապաստակ տեսաւ. ուրախացաւ և ասաց. „Փա՛ռք

(1) Առ. Եկեղ, որ է Հռոք կամ շուքին ձգած մռմթը. աճ. զեղջէ.

(2) Առ. Յալու, աճ. թուլան.

(3) Բաց առջ., դաշտ. Առ. Ոօզէ, աճ. ավա.

(4) Առ. կոստ, աճ. աղանձնը.

քեզ Աստուած, հիմա գիտեմ որ տունի տէր  
կլինիմ... Այս բռնեմ այս նապաստակը, կտա-  
նեմ քաղաքին մէջ կվաճառեմ երեսուն կո-  
պէկի. այն փողովը մեր գեղէն մէկ խոզ կը  
գնեմ, խոզը տասներկու խոճքոր (<sup>(1)</sup>) կը ծնի,  
որոնք կմեծնան ու տասներկուքական ձագեր  
կը ծնեն. Ես ամենուն կպահեմ, կմեծցընեմ  
ու կը գիրցընեմ, վերջը հետզհետէ մորթելով՝  
մէկ ամբար միս կժողովեմ. միսը կը ծախեմ,  
իսկ փողովը տուն կշինեմ. ինքս կը կարգուեմ,  
կինս ինձի երկու մանչ զաւակ կը ծնի, որոց  
անունները Պօղոս, Պետրոս կը դնեմ: Տղայքս  
կը մեծնան ու վարուցանք կանեն. իսկ Ես պա-  
տուհանին տակը նստելով կարգադրութիւններ  
կանեմ ու „ԵՇ տղայք, կը կանչեմ Պօղիկ,  
Պետիկ, շուտ արէք որ օրն իրիկուն եղաւ,  
ինչու զուր տեղը ժամանակ կանցընէք, փուռ  
կենդանիք. Ես ձեր տարիքն եղած ատենս, գի-  
տէք ինչպէս կաշխատէի...“ Եյս վերջին խօսքը  
այնպէս բարձր կանչեց գեղացին, որ նապաս-



տակը սարսափելով փախաւ. իսկ գեղացւոյն  
երեակայեալ տունն իւր բոլոր հարստութեամբը,  
ինիկովն ու որդիներովը անյայտացաւ:

(1) Առաջ պօրօնութեալ գոմուզ եազրութեալ:

38.

ՀԱՅԿ, ԱԶԳԵՊԻԵՑ ՀԱՅՈՑ.

Մեր Հայոց ազգի առաջին նահապետն ու ազգապետն եղաւ ՀԱՅԿ անունով քաջ մարդուն մէկը, որ ՚Նոյ նահապետի Յարեթ որդուոյ երրորդ սերունդն էր. վասն զի Յարեթի որդին էր Գրիգոր, Գամերի որդին Խորիչու և Թարգումայ որդին ՀԱՅԿ:

Հայկայ ժամանակն աւելի զօրաւոր էր Յարիլոնի մէջ Ռէլ կամ Նէրեւէն անունով մարդուն մէկը, որ ՚Քամայ թոռը՝ Քուշայ որդին էր. ուստի և ժողովրդոց մեծ մասը բռնութեամբ և խոստմունքով իրեն հնազանդեցուց, ու նոցա վերայ թագաւորելէն յետոյ՝ ուզեց Եստուծոյ տեղ պաշտուիլ: Հայկ՝ Ռէլայ ամբարտաւանութեանն ու յանդգնութեանը չղիմանալով՝ քովը ժողովեց իւր երեք հարիւր քաջ մարդիկը, այսինքն իրեն որդիքը, թոռներն ու նոցա ընկերացած հաւատարիմ անձինքը, և չհնազանդեցաւ նորան, որով աշխարհիս առաջին պատերազմը բացուեցաւ:

Պատերազմի ժամանակ Անայ ծովուն մօտի ընդարձակ ու յարմարաւոր դաշտին մէջ երկու կողմէն բաւական քաջեր ընկան, և պատերազմը երկու կողմէն ևս անպարտելի մնալով՝ Ռէլ զարհուրեցաւ և ուզեց յետ փախչել մինչեւ

մնացեալ զօրաց օդնութեան հասնիլը։ Ըստ Հայկ ժամանակ շտալով երկար մտածելու, քաշեց ուժգնապէս իւր երեքթեան աղեղը և այնպիսի կերպով զարկեց Խելայ կուրծքին, որ նետք՝ նորա հաղած երկաթի դրահէն անցնելով կոնըկէն գուրա ելաւ, դեսնի մէջ իդուեցաւ. որով այն ահապին ու ամբարտառան հական հողի վերայ փռուեցաւ։

Խելայ մնացեալ զօրքը փախչիլ մկսան, և Հայկ՝ աղատութիւնը աշխարհակալութենէն վեր դասելով՝ Խելայ մարդոց ետևէն չընկաւ, որ բոնութեամբ հպատակեցրնէ նոցա, այլ յաղթութեան վերայ ուրախացած՝ իւր բնակութեան տեղը, Տուրուբերան աշխարհի Հայ գաւառը դարձաւ, և Հայրաբար կառավարելով իւր հպատակները, կարգեր, կանոններ դրաւ, դանաղան շինութիւններ արաւ, և 400 տարոց չոփի ապրելէն վերջը՝ մեռաւ։

Հայկայ արտաքին տեսքը, այսինքն դեմքի գեղեցիութիւնը, մարմնոյ յաղթանդամ՝ կաղմուածքն ու հոկայական հասակը՝ համապատասխան էր իւր վեհանձն բնաւորութեանը։

Եյս քաջ աղգապետին անունովն է որ մենք Հայ կասուինք։

ՅՅ.

ԵՐԿՐՈՒԹԻ ԸՆՍԴ. ԵՐԱԽԻ Գ. ԵՐԵԱՑ.

ՀԱՐԱՀԱՆՆԻ.

Ո՞վ պայծառ ասաղեր գեղեցիկ ասաղեր  
 Որ երկինքի մէջ դուք կը շողշողէք,  
 Եյօպէս ծագելով զիշերէ զիշեր .  
 Աաղաչեմ ձեղի, պատմեցէք՝ ի՞նչ էք ...  
 Վքնացող երկրին պահապաննե՞րն էք,  
 Երբ նորա վերայ կը պատէ մութը,  
 Որ ձեր լուսաւոր զունդովը կելնէք  
 Ուրախ ու զբւարթ երկինքին տակը ...  
 Շանապարհորդի ճամբուն լոյս կուտաք,  
 Երբ ոչ լուսին կայ և ոչ արեղակ .  
 Ու նորա անշեն անապատին մէջ  
 Եռաջնո՞րդ կընիք իրրե հուր անշէջ ...  
 Լուսափայլ աստղեր, դուք ձեր կարգովը  
 Որ բոլոր զիշերն արթուն կը հըսկէք,  
 Երձակ ծովուն մէջ մոլորած նամւը  
 Երդեօք իւր ուղիղ ճամբուն կը դընէք ...  
 Ո՞չ, ի՞նչո՞ւ հարցմանս չեն պատստիաներ,  
 Չայնի պակսութի՞ւն մի կայ այդ աեղեր :  
 Եյդ փայլուն լուսիրն ի՞նչո՞ւ են կիցեր  
 Ու մէկ պատսախան ինձ չեն յուղարկեր :  
 Երդեօք մեր գարնան անուշ զեփիւռը,  
 Աամ թէ ամառան ոյն սառաիկ տաքը,  
 Եշնան անձրեւը, ձըմեռւան ձիւնը .  
 Երե՞նք կը զըրկեն, — զիանայի մէյմը ...  
 Թաղ պատմեն ինձէ, որո՞ք զըրբերէն  
 Շատ զարմանալի բաներ սովորեցան,  
 Թէ ի՞նչպէս դոքա հին աաեններէն  
 Կապուտակ երկնից տակը զըրուեցան :

Եյսամի զեղեցիկ սիւռո՞ն լոյսերը  
 Ը աս կուղեմ զիտնաւէ ի՞նչ ւ ի՞նին պիտի  
 Զըկա՞յ մեկը որ իրիկոնները  
 Եյդ աստղերու վրայ մեկ դաս ասյ ինձի :  
 Ո՞ւ ասուս ո՞ւ գուս :

Եկանջ զիր ինձի , միաբ առ ամեն բան  
 Ով շետարքեն մանուկ բանս մեզ ո՞ւ ո՞վ  
 Ես ըեղի պատմեմ թե ի՞նչպէս ելուն  
 Ճի՞ ատեննելը հրաշալի լաներ ։ Հայուն  
 Կնապէս երկինքի կամարին ամկը առանց  
 Եստղերուն դունդը կարդամ շարունցուն .  
 Եւ այն քննդարձակ միջոցին մեջը ո՞ւ ո՞վ  
 Ենչափակերեխ հրամայուեցան ։ Անուն  
 Եյն , որ ըստեղծեց գաշտերո՞ն միջևամայ  
 Անտրպատիկ ծաղկանց իւրաքանչես ըր ո՞յն  
 Եյն որ զոյացուց անսառո՞ն միջնայուն  
 Եզր ու զով անող ծառոց ճիւղերիցուն  
 Եյն նայն ԱԱՏՈՒԽԵՐ իւր բարոնչելիուն  
 Եւ ամենաբար գօրտով իւծովը ո՞ւ ո՞ւն ո՞վ  
 Մէկ խօսքով զբան կարդի կամանի խոնը ։  
 Երկնից կամարին ասկի աստղերը ։ Զանցի  
 Ենք գարգարեցնուց ամենդ ։ Համար ։ Ա  
 Պայծառանրշոյ ճառադրութեներով , Համա  
 Ենքը հրամայեց ով զիշերները ։ Համար  
 Մէկ զբանուն վերայ ծագին շարալովին ։  
 Անունի վեր նայեա ամեն մեկ շատրւուն  
 Եյն կանքն եղեւրուն կը պըսդզայ այլ  
 Մէկ մեծ աշխարք Ար կամ մի արեկակ .  
 Որ օդին շերամ անեղերուն քըս պայէ ։ Ա  
 Շառ ցէ վաստու որ բընակի չեն թականը քան  
 Ճան , ուր քրիւս ին մասր ասք չըրկիւեց .  
 Եւ ո բաժին թեամիք կ'երգեն ցաւման ան  
 Եյն մեծ քաներու որ Աստու ած աստղեց :

Աչ իսկ դու այս մեր հեռի աշխարհէն  
Ապշած նայէ վեր անօգուտ տեղը .  
Եյլ իւրաքանչիւր շողշողուն աստղէն  
Աովէ Աստուծոյ իմաստութիւնը :  
Եյո, թող նորա, Աստուծոյ դործքը,  
Քու մատաղ սըրախդ միշտ սովորեցրնեն,  
Ու իրենց անձայն բարբառներովը  
Խոր անձառ սիրոյն քեզ ծանօթացնեն :

## 40.

Գ Ի Շ Ե Բ .

Գիշեր կասուի օրուան խաւար մասը, որ  
արեւուն մտնելէն կըսկսի և մինչեւ ելնելը կը  
տեէ :

Գիշերը ամենայն մարդ հանգիստ կը քնա-  
նայ անկողնոյն վերայ. խաւարը երկրիս երեսը  
կպատէ. ամեն աչք կփակուի, ամեն ձեռք դոր-  
ծողութենէ կդադրի և ամեն մարմին կհան-  
գրստանայ: Աստուծոյ ամենատես աչքն է միայն  
որ չի քնանար, և նորա ամենազօր ձեռքն է  
որ մեզ կպահպանէ:

Աստուծած գիշերն ստեղծելով՝ կամեցաւ որ  
երբ ցորեկը յոդնինք, գիշերը հանգչինք ու քնա-  
նանք: Խնչպէս որ որդեսէր մայրը՝ իւր սիրուն  
զաւակը անհանգիստ չանելու կամ քունէն  
չղարթեցընելու համար, կնայի որ ամեն ձայն

դադրի, և օրօրոցին վերայի սփռոցը կծածկէ, որ իւր զաւակի դիւրազգաց աչքերը լուսոյ ազդեցութենէն ազատ պահէ. այսպէս ևս առաւել ամենաբարի և ամենողորմ Ըստուածը՝ խաւարին վարագոյրը կքաշէ մեր չորս կողմը, և լուութիւնը կտիրէ բոլոր բնութեան երեսը, որ իւր բազմաթիւ ընտանիքը խաղաղ ու հանգիստ ննջէ:

Եթի գիշերուան սաստիկ խաւարը կամաց կամաց կհաղածի արշալուսին առջևէն, և արեգական ճառագայթները մեր աչքերուն կզարնէն և մեզ կլուստուորեն ու կորախացընեն, այն ժամանակ պէտք է մեր օրը սկսինք փառարանելով մեր ստեղծողին, որ գիշերը մեր հանգիստ քուն եղած ժամանակը՝ արթոն աչքով հսկեց մեզ վերայ ու պահպանեց մեզ:

Մեր սրտերը երախտագէտ պիտի լինի այն անքուն պահապանին՝ մեր քնացած ժամանակը և մեր բերանը փառարանութիւն պիտի տայիրեն՝ մեր զարթելէն վերջը:

Ճանաչաբի քան զայտական աղմենի ծառ սպական անգամ, ու զայտական աղմենի պատկան աղման պատկան աղման աղման: Յայտական աղման պատկան աղման պատկան աղման պատկան աղման: Հայտական պատկան աղման պատկան աղման պատկան աղման պատկան աղման պատկան աղման:

## 10.

ԱՐԱՄԱՑ ԴՊՐՈՑ ԵՐԹԸՆՔ:

Ամբատ Ամատունի ասուած գեղացւոյն մէկը՝  
 երկու որդի ունէր, յորոց փոքրին անունը Աշու  
 էր: Առա Շուշան մայրը՝ հունձքը ժողովելէն  
 յետոյ մէկ օր ասաց նորա Ամբատ հօրը թէ,  
 „Աստուածածնէն յետոյ ժամանակ է մեր Ա-  
 րամը դպրոց տալու. վասն զի Աահանը (Արա-  
 մայ մեծ եղբայրը) մեզ ըստ բաւականին կարող  
 է օգնել թէ դաշտի և թէ տան մէջ: — Թող  
 երթայ“ պատասխանեց հայրը: «Քանի մի օրէն  
 յետոյ Արամայ հագուստները շտկեցին, կօշիկ-  
 ները նորոգեցին, և նա սկսաւ դպրոց երթալ:  
 Երբ մեծացաւ ու չսփահաս եղաւ Արամ, տես-  
 նելու բան էր թէ ի՞նչպէս ամենայն օր իւր  
 աղօթքի ժամանակ վառք կուտար Աստուծոյ  
 և „Շնորհակալ եմ ձեզմէն, ով երախտաւոր  
 ծնողք իմ, կասէր, որ դուք ինձ ժամանակին  
 դպրոց յուղարկեցիք, իսելք ու բանականութիւն  
 սովորեցուցիք և մէկ կտոր հացի տէր արիք“:


## 11.

ԴՊՐՈՑ:

(Արամայ Աւահանին դրանք նամակը).


Աիբէլէ Էլբայը էմ զԱՀԱՆ:

Աէր ծնողաց խրատին համաձայն՝ ես սովո-  
 րած եմքեզ ամենազի բան ճշմարտութեամբ



ասել. ուստի և կը գրեմքեղ թէ ինչպէս երեկ դպրոց մտայ:

Ո՞ւր զեղէն ոչ մէկ աշակերտ չլինելով այս դպրոցին մէջ, չկարողացայ առաջուց իմաննալ որ վարժապետներն աշակերտներուն կծեծե՞ն թէ ոչ: Ո՞ստիկցայ ես, սիրելի եղբայր, մէկ մեծ շինութեան, յորում տղայք կկարդացին և պատուհանին տակը կանգնեցի: ‘Դպրոցին մէջ տեսայ ինձի համար բոլորովին նոր առարկաներ. այստեղ վարժապետ, աշակերտներ, դպրոցական գրասեղաններ, գրքի պահարան, գրքեր, գիր գրելու համար պատրաստուած տախտակ, մատիտներ, և այլն, և այլն: Մինչդեռ ես այս բաները գիտելու վերայ էի, և ահա վարժապետը քառակուսի երկայնկեկ փայտի կտոր մի առաւ ձեռքը. „վայ մամա“ մտածեցի ես. „կերեկի թէ ծեծելու պիտի սկսէ. փախչէմ, տուն երթամ“: Խակ վարժապետը մօտեցաւ գրքի պահարանին, հանեց այնտեղէն մէկ պատկեր և սկսաւ նորա վերայ զանազան առարկաներ ցուցընել: Այն պատկերին մէջ արջ, նապաստակ, խոզ և ուրիշ կենդանիք կային, որոց ամենուն ևս ճանաչեցի: Վշակերտներն ասես, ուրախ ուրախ կնայէին վարժապետին վերայ, և պատկերին միջի կենդանիները աւելի լաւ տեսնելու համար՝ տեղերէն կէս մէջքով դէպի առջև կենսէին: „Չէ, կերեկի որ դպրոցի մէջ ծեծ չկայ“ մտածեցի



ես ու դպրոց մտայ: Եյժմ դպրոցին մէջ փառաւոր կերպով կը բնակիմ ու կսովորիմ: Դուն ալ ինձի գրե, թէ ինձմէն վերջը ինչպէս քու կեանքդ:

Ք. Է. Ա. Հ. Ե. Ա. Հ. Ե. Ա. Հ. Ե.

ԵՐԵՄ ԵՄԵՏՈՒՆ

լուսն միմզպապասաւ դյուն միմզպան մասնմզգ մայմապրաբ ու մմասիլ դմանմզգ ով զոն զնդի սեմմապանայ, լազմի մոտ 12. մմբան ով ու մմազ

Գ. Կ. Բ. Ք.

Վիրքը կբաղկանայ թղթի թերթերէն, որ առհասարակ տպուած կլինի տառերով: Վիրք շարադրողը հեղանակ կասուի, որոյ անունը սովորաբար գրքի առաջին երեսի վերայ կլինի: Հին ժամանակները՝ հեղինակը կը գրէր գիրքը, իսկ ուրիշները դուրս կը գրէին: Եւ որովհետեւ այդ բանին համար երկար ժամանակ, մեծ աշխատանք ու գրավարժ ձեռք կհարկաւորէր, ուստի ասկէց չորս հարիւր տարի յառաջ, գումարէ անունով գերմանացւոյն մէկը հնարեց գիրք տպելու արհեստը: Ի սկզբաննա կփորագրէր տախտակի վերայ այն գրերը, որք պէտք էին տպելու, յետոյ թանաքը կը քսէր գէալի գուրս փորուած գրերուն, թուղթը կը գնէր տախտակին վերայ և բոլոր գրերը վերան կը տպուէին: Ըայց տեսնելով որ դժուար է

այնպիսի կերպով տպագրութիւնը, հնարեց  
արձիծէ. (1) շարժական տառերը, որք հետզհետէ  
կատարելագործուելով, դրաշարները պէտք եղած  
տառերը մէկմէկու մօտ կը դնեն, բառերը ձե-  
ռագրին պէս մէկմէկէ կը կըաժանեն, տողերը  
պէտք եղած չափսովը հաւասարացընելէն յետոյ  
երեսներ կկապեն ու տպագրական մեքենանե-  
րուն վերայ յարմարցընելէն վերջը՝ մուր կը  
քսեն ու կը տպեն:

## Հ Ե Վ Պ

13.

Բայց պէտք է ասել, որ տպագրութեան  
գիւտն անգամ այնքան օգուտ չէր կարող բե-  
րել, թէ որ թուղթ շիներու հնարը չգրտնէին.  
վասն զի ի սկզբան մարդիկ կը գրէին բուռա-  
կանաց թերթերու, քարի, տախտակի, կաշիի  
կամ մազաղաթի (2) վերայ: Մարդուս զարմանքը  
կուգայ, երբ կիմանայ որ թուղթը անպէտք  
լաթի կտորներէն կշինուի: Լաթի կտորները  
նախ մանր կերպով կկոտորեն, յետոյ կաթսայի  
(3) մէջ կեփեն, կլուանան, ճերմըկուց կիսառնեն  
(կաւելցընեն մէջը զանազան գոնով ներկեր,

(1) ՏՀ. ՂԱՐԱՆ, ռ. ՀԱՅԱՍՏԱՆ:

(2) ԿԵՐԱԿ ՀԱՅԱՆ ԹԱԿԹԸ:

(3) ՏՀ. ՂԱՂԱՆ, ռ. ՀԱՅԱՍՏԱՆ:

թէ որ ուզենան էստուար թուղթ շինելու), յեւ  
այս ջուրի պէս նիւթը հետդիւնէ, թղթաւ  
շէն մեքենայի ջրալի ամաններէն անցրնելով՝ և  
քիչ քիչ կարծրացրնելով թղթի ձևի կրերեն,  
մէծ գլանով կը սխալեն, կչորցրնեն ու թուղթը ը  
կաղաղորայտուի: Եւ որպէս զի թուղթը գրելու  
ժամանակ չծրծէ, վերոցիշեալ կաթսային մէջ  
սասինձ<sup>(1)</sup> կիսառնեն: Գրքի կազմի ստուար-  
թուղթն (2) ես նոյն կերպով կշինափ, ինչպէս  
որ թուղթը:

### ԵՊՐԵՑՐԱԿԱՑ ՍԵՐ.

Եղբայր կամ քոյր ունեցողը ձեռքէն եկածին  
չափ սփսոփի աշխատէ իրեն նման մարդկանց ինչ  
սէր որ պարտական է ցուցընել, ամենակատա-  
րեալ կերպով սկսէ նախ երեցընել ծնողաց  
վերաց, և ապա նոցա՝ որք եղբայրութեանց  
մէջ ամենէն մերձաւոր սիրով հետը կապուած  
են, այսինքն նոցա՝ որք իրեն հետ նոյն ծնո-  
ղաց դաւակներն են:

Եղբայրափութեան առհասարակ մարդա-  
սիրութեան աստուածային գիտութիւնը լաւ սո-

(1) ՕՐԻ. ՎԱԾԻ ԱԿ ԹԱՐԴՅԵՒ:

(2) Կարտոն.

41.

(ԱՅՆԿ) - ՓՈՐ ԵՒ ԱՆԴԱՄՔ:

ԵԱՅ բանի՛ մէկ ջանանք յոգնինք  
 Հաղար կերպով լենք աշխատինք,  
 Եւ դու միայն, դու անկուշտ փոր  
 Այս տաս առնես քու ծոցըդ խոր  
 Մեր պատրաստած կերակուրներն<sup>4</sup>,  
 Եյսպէս ասին օր մ'անդամներ.  
 Չեռք, ոտք, զըլուխ, բերան աչքեր  
 Խոր գերին ենք կարծես եղեր.  
 Խակ ինքը միշտ ծոյլ կը կենայ,  
 Մեղի և ոչ բաժին կուտայ.  
 Եյսուհետեւ չենք աշխատիր,  
 Դունք զու զըլիսուդ ձարը զըտիր<sup>5</sup>:

Եյս ասելով մէկ-բերան,

Աշխատանքէ դադեցան:  
 Յայնժամ, թէպէտ փոր ծոմ կեցաւ,  
 Շայց ցաւն իրենց վիրայ ընկաւ:  
 Շորոր մարմինը թռումեցաւ,  
 Աչ ձիռք ոչ ոտք շարժել կըցաւ.  
 Երիսներուն զընը փախաւ,  
 Աչքերուն լոյսը թռուլացաւ  
 Եյն ժամանակ լաւ հասկացան  
 Թէ որչափ փորն էր պիտուական,  
 Աը սնունդ իրեն նախ քաշելով  
 Ա երջն ամենուն ծածուկ ձամբով  
 Կը դարձունէ կուտայ եղեր,  
 Ոչ թէ անզործ ու ծոյլ նրաներ:

41.

ՃԵՄԱՐՏՅԱԿՈՒՆ ՑԱՌԹԱԽԹԻՒՆԸ.

Կասեն թէ Ա ահան Ա ամիկոնեանը Պարսից  
 դէմ մեծամեծ քաջութիւններ անելէն ու նոցա  
 Միհրան զօրավարին սպաննելէն յետոյ՝ երբ մեծ  
 աւարաւ Առող քաղաքը դարձաւ, և երբ իւր  
 Ամբատ որդւոյն հետ մէկտեղ սկսաւ քաղաքին  
 սպատերազմի համար շինուած տեղերն աչքէ  
 անցընել, նոյն միջոցները չարագործներու բանտն  
 ալ մտաւ ու կալանաւորներուն հարցուց՝ որ  
 իմանայ թէ ի՞նչ յանցանքով բռնուած են:  
 “Կորա հարցմունքին վերայ ամեն յանցաւոր  
 անհիմն պատճառանք մէջ բերելով՝ ինքնիրեն  
 արդարացնելու ջանաց. մէկն ասաց թէ „Ինձ  
 թշնամութեամբ փակեցին այստեղ“ ։ միւսը՝  
 թէ „Իանտապետին կաշառք կերուցին ու  
 ինձ այստեղս մոցուցին, երրորդը՝ թէ „Դա-  
 տաւորը գործին վերահասու չեղած՝ անիրա-  
 ւութեամբ բանտարկել տուաւ ինձ“ և այլն:  
 Յետոյ երբ մէկ կարձահասակ ու անկիրթ մար-  
 դու մօտեցաւ, և „Դո՞ւն ինչ պատճառաւ փա-  
 կուեցար, հարցուց. — Տէր իմ, պատասխանեց  
 մարդը, իմ յանցանքը ես չեմ կարող ուրա-  
 նալ. ուստի և կիսոստովանիմ որ արդարութեամբ  
 պատժուած եմ ես. վասն զի փողի կողմանէ  
 խիստ նեղութիւն ունենալով հարկագրեցայ

մեր դրացիւն ստակ զողնալ որ որդիքս քաղ-  
ցած չմնանք։ Ճարդ բռն աճրամ և Ճառ։]  
Վահան այս Ճշմարիտ խոստվանութիւնը  
լոելուն պէս Ճեռքի գուազանովը քանի մի  
անգամ թէթէ կերպով զարկեց մէջրին ու  
“Ծնղգամ”, ասաց, այսքան անմեղ մարդոց մէջ  
ինչ բան ունիս դուն։ շուտ գուրս ել բանտէն։  
Եյսպիսի կերպով այն խեղճ մարդուն ազա-  
տութիւն տուաւ. իսկ միւսները, որ սուտ տեղը  
իրենք իրենց արդարացընելու ջանացին ոչինչ  
պատճառներով, դեռ երկար ժամանակ բան-  
տին մէջը մնացին։

: Հիմացքայ պիտի մայ

արք մերացւասպա բայց մի պայ։]  
առաջ ոյ Նձր սփառութիւն (1) Հայութ գուրայն  
դուսին դարս։ 43.

ԱՐԱՄ ԱՇԽԵՐՀԱԿԵԼ

ինձնունքնէ Եպատճառը որ մեղի Հայերուս,  
ուրիշ ազգերի Արքենթ կամ Լունն կասեն, մէկ  
օր Հարցաց Համադասակ իւր Արշակ Տօրը։—  
Պատճառն այն է, պատասխանեց Արշակ, որ  
մեր Եւս նահապեար մեծամեծ քաջութիւններ  
անելով իւր Ժագաւորութեան ժամանակ,  
մեր Հայրենիքի չորս կազմն եղած ազգերը նո-  
րա անունովը Ճանաչեցին մեր ազգը, որով նախ  
Աշուածան կոչեցին մեղ և ապա Հետղհետէ Աշուած  
կամ Լունն ասացին։

— Հայր, ի՞նչ քաջութիւններ արած է Երամ և ի՞նչպէս մարդ եղած է ինքը:

— Երամ նահապետի քաջութեանց առաջինն այս էր, որ երբ Հայաստանի արևելեան կողմերուն վերայ Վարաց Նէրաւ իշխանին բռնանալը տեսաւ, յիսուն հազար քաջ զօրք ժողովեց սաստիկ կոտորած արաւ Նիւքարին բռնեց Երմաւիր բերաւ, և այն ժամանակի քաղաքականութեան համեմատ հրաման արաւ որ մէկ բարձր աշտարակի ծայրը հանելով՝ երկաթէ ցից զարնեն այն գոռող ճակատի վերայ, որ անիրաւութեամբ կուղէր Հայոց իշխանական պսակը յափշտակել:

Երամայ երկրորդ պատերազմն եղաւ Շաբելացւոց Դարչուայ (1) իշխանին դէմ, որ քառասուն հազար հետեւակ և հինգ հազար ձիաւոր զօրքով Հայաստանի վերայ վազեց. բայց քաջայալթն Երամ յանկարծ վերայ համելով թշնամոյն զօրքին կէսը կոտորեց, կէսը հալածելով՝ Կորդուաց ազգին մէջը ցրուեց և Շարշամին այլ բռնելով սպաննեց:

Երրորդ յաղթութիւնն էր Կապադովկացւոց Պայտողէն իշխանին դէմ, որոյ զօրքը հալածելէն յետոյ բոլոր Կապադովկիոյ տիրեց, Վշտի անունով քաջ և հաւատարիմ իշխանը, որ իւր

(1) Այս ո՞յն Բարձամեն է, որուն մեծամեծ քաջութեանցը համար Առողիք առանձու առ կողաշտէին:

աղքականներէն մէկն էր, սպարապետ կամ կուսակալ դրաւ այնտեղ, քաղաքին մէջ տասը հազար զօրք թողուց, և հրաման հանեց որ իւր բոլոր օտարազգի հպատակները մեր աղքային լեզուն սովորելով՝ հայերէն խօսին:

Խակչորորդ յաղթութիւնն այս էր, որ Առոր գետէն անցնելով՝ Վրացիներն ու Ըղուանքը հնազանեցուց և հարկատու արաւ:

Եյնուհետեւ Արամ Հայաստանի վիճակը թշնամեաց յարձակմունքէն բաւական ապահովցած տեսնելով՝ սկսաւ մեր երկրի բարեկարգութեանը վերայ հոգ տանել և նոր նուաճած երկիրները հայրաբար ինսամել:

Մինչդեռ Արամ այսպիսի բարեկարգութեանց հետ էր, և ահա Ասորեստանի մէջ թագաւորեց Նին: Սա իրմէ յառաջ եղած շաջերուն պատմութիւնը կարդալով՝ երբ տեսաւ որ Տելայ սպանողը մեր Հայկնահապետն եղած է, միտքը դրաւ պատերազմի ենել որ նորա յաջորդներէն առնու վրէժը. բայց երբ մեր մեծանուն աշխարհակալին քաջութիւններն իմացաւ, ոչ միայն վախնալով յետ կեցաւ գիտաւորութենէն, այլև Արամայ հետ բարեկամութիւն հաստատելու համար՝ շնորհաւորելով նորա յաղթութիւնները, մարգարտազարդ թագ յուղարկեց իրեն:

Այսպէս ահա Ծրամ յիսունոթը տարի Հայաստան աշխարհը կառավարեց, աերութեան ուհիմանները մեծամեծ քաջոթիւններով ընդարձակեց, մեր մայրենի լեզուն կտաղադովիթոյ մէջ տարածեց և իւր բաջահռչակ ու սպանծառ լի անունը մեր աղջի սնուռոն հետ անխղելի կապով անմահացընելէն յետոյ՝ աերութեան իշխանութիւնը իւր Վլայորդոյն յանձնեց ու Քրիստոսէ 1769 տարի յառաջ մեռաւ:

Ծրամ իրեն երկրորդ ազգապետ, իրեւ առաջին աշխարհակալ Հայկազանց և իրեն ճշմարիտ հայրենասէր նահապետ, տարակոյս չկայ որ ժամանակաւ իւր ընդարձակ պատմաւթիւնն ու զանազան քաջոթեանց սպազազրաւթիւնն ունեցած է, բայց որովհետեւ մշկի կողմէն ժամանակին հնութիւնը և միւս կօղմէն մեր բաղմաթիւ թշնամեաց յարձակմունքն ու աւերմունքը թողուցած չեն գժբաղվաբար այն թանկագին հնութեանց պատմական աղբիւրները մինչև ի մեջ հասնելու, բաւականանամք խորենացւոյ այս համառօտ՝ բայց իմաստափեառքերը կարդալով. „Սա (Ծրամ) աշխատասէր ու հայրենասէր մարդ լինելով, լաւ կհամարէր իւր հայրենեաց վերայ մեռնիլը, քան թէ տեսնել օտար աղքերու ոտքը Հայաստանի

սահմանէն ներս կոխածն ու իւր արինակից  
ազգայնոց վերայ տիրապետածը“:

Այս իօսքերէն յայտնի կերպով կտեսնուի,  
որ Արամ շատ լաւ հասկացած է ՀԱՅՐԵՆԻՔ ա-  
սուած սրբազն բառին ընդարձակ մեկնու-  
թինը, որուն սիրոյ կրակով վառուած՝ իւր  
բոլոր հանգստութիւնը՝ աշխատութեան, և իւր  
իշխանական զուարճութիւնները՝ երկարատև  
պատերազմներու զոհելով, իրաւամբ խօնարհե-  
ցուց այն հպարտ ու գոռող անձինքը, որք միայն  
իւրեանց աշխարհակալութեան անկուշտ բաղ-  
ձանքը լեցունելու համար Հայաստանի վերայ  
կվագէին. և արդարացի կերպով տիրեց այն եր-  
կիրներուն, որոց կառավարիչներն ուզեցին կամ  
բուն Արամայ, և կամ նորա սիրած նուիրական  
Հայրեննեացը վնաս հասցընելու:

Սորա ապացոյցն այն է, որ Արամ իւր  
թշնամիներուն յաղթելէն վերջը՝ միտքը չդրաւ  
ուրիշ երկիրներու տիրել, այլ Հայաստանը  
թշնամիներէն ապահովցած տեսնելով՝ իւր նո-  
րանոր բարեկարգութիւններով՝ հպատակաց վե-  
ճակը բարոքելու զբաղեցաւ:

Առաջին ուժում առաջը առաջ առաջնական  
ՀԱՅՈՒՏԱՐՄՈՒԹԻՒՆ.

Գայլը տեսնելով որ հովիւն<sup>(1)</sup> իւր ոչխար-  
ներուն մօտ կըքնանայ, մօտիկցաւ. պահպանող  
շունին ու երեսանց սրտացաւ ձեանալով՝ Ծխ,  
ինչպէս կցաւիմ ես քեզ վերայ, ասաց, դուն,  
յիրաւի, ամենաթշուառ արարած ես աշխարհիս  
վերայ։ Ծուաւօտէն մինչև իրիկուն դուն պար-  
տաւոր ես բաց երկնքին տակը գտնուիլ, որ-  
պիսի եղանակի մէջ ևս լինի, այնպէս որ երբեմն  
սաստիկ անձրեներէն կը թրջուիս, երբեմն սաս-  
տիկ արեւու տաքութենէն կը թրմրիս ու կընկնիս  
ցորեկը ոչխարներուն պահպանելէդ ևս չբաւա-  
կանանալով, գիշերն այլ տունին պահպանու-  
թիւնը անելու կը դնեն քեզ, որով ոչ ցորեկը  
և ոչ զիշերը հանգստութիւն ունիս։ Ծիտակին  
ասեմ, քու կեանքդ կեանքչէ, այլ կատարեալ  
տանջանք… Ո՞ի անգամ աչքդ դարձուր տի-  
րոջդ վերայ, նայէ թէ ի՞նչ կանէ. նա իրեն  
համար մէկդի քաշուած՝ զրեթէ ըոլոր օրը  
հանգիստ քուն կլինի. թէեւ լաւն այն էր,  
ինչպէս որ իրօք ալ կպատկանէր, որ քեզմէն  
աւելի մտածէր իւր ոչխարներուն վերայ…  
Ըյսքան բաները տեսնելով միթէ դուն չե՞ս  
ձանձրանար այդպիսի անհանգիստ կեանքէդ։

(1) Խացիք, ան. չորսեւ.

Վնչո՞ւ պիտի ձանձրանամ, պատասխանեց շոնք. Ես այնպէս կկարծեմ որ կատարելով իմ պարտաւորութիւնս, պէտք չէ որ հանգստութեան վերայ մտածեմ:

— Դիցուք թէ այդ ճշմարիս է, շարունակեց շողաքորթ գայլը. բայց և այնպէս դռն յաւիտենական գերի չես քու պարտաւորութիւններուդ: Եյդ բանը գուն կարող ես քու տիրոջմէն օրինակ առնուլ:

— Ո՞ր բանը գէշ կերևի քեզ նորա արածին մէջ: Ո՞իթէ նա կարող չէ հանգստանալ՝ ինձի պէս հաւատարիմ պահապան ունենալով: Ես այնպէս կկարծեմ որ նա աղով ինձի աւելի պատիւ կանէ, հաւատալով իմ հսկողութեանս իւր ըուլոր ոչխարները. ուրեմն նորա վստահութեանը նայելով՝ ես աւելի պարտական եմ հաւատարիմ լինելու:


— Եորա այդ քեզ վերայ ունեցած վստահութեանը խօսք չունիմ. բայց և այնպէս, քու վիճակի խեղճ դրութիւնը աշքի առջև ունենալով, նա իրեն պարտք պիտի համարէք մտածել իւր պարտաւորութեանց վերայ ու չարչարէք քեզ այդպէս գուեհկարար:

— Եսդ հակառակն, ես իմ չարչարանքը ոչինչ կհամարեմ տեսնելով իմ տիրոջ լիակատար վստահութիւնը. իսկ իմ ունեցած կեանքը որ գուն տանգանիք է կասես, շատ կը սխալիս.

վասն զի ես իմ մէկ օրուան աներկիւղ ու հանգիստ կերպով կերած կերակորս չեմ փոխեր քու բոլոր կեանքիդ հետ։ Վնա կորսուէ այս տեղէն ասելով՝ սկսաւ հաջել գայլին վերայ։ Հովիւը զարթեցաւ իւր հաւատարիմ թոփլանին հաջուածքէն, որով այն խորամանկ ու շողոքորթ գաղանը ամօթէն փախչել հարկադրեցաւ։

## 45.

ՊԱՐԵԼ ԳԻՏՏՈՂ. Ա. Ք.



Երջին մէկուն մարդիկ սպարել սովորեցուցին և բաւական ժամանակ շղթայի զարկած քալցուցին։ Վնչպէս եղաւ, ինչպէս չեղաւ, երկար ծառայութենէն յետոյ մէկ օր Երջն իւր ծնրդեան անտառը դարձաւ։ Երջերն իւրեանց հայրենակիցը ճանչնալուն սկսո՞ւ բոլոր անտառին մէջ սկսան մէկմէկու ասել թէ „Գիտէ՞ք ինչ կայ. Լուրո՞ւ արջուկը, որ ասկէց քանի տարի առաջ ուրիշ տեղեր գնացել էր, նորէն մեզի դարձել է“։ Եյս համբաւը հետզհետէ

տարածուելով՝ որն առդիւն, որն անդիւն, ա-  
մենքն սկսու Հանթաթ աթ արջին տեսութեան  
երթալ, նորա վերադարձը չորհաւորել միան-  
գամայն և խողրել, որ իրեւ հեռու տեղեր  
քաղաք արջ, իւր դիմէն անցածները պատմե:—  
Արախութեամբ կզատմեմ ասաց Հանթաթը  
և սկսու իւր տեսածները զարդարուն ոճով  
պատմել իւր հայրենակիցներուն, չմոռնալով  
միևնոյն միջոցին ցոյց տալ նոցա անձամբ թէ  
ի՞նչովէո ինքը շղթայի զարնուած ժամանակ  
մարդկանց բարձութեան մէջ կպարեր ու  
կիւռաղար:

Անհերք պարող Հանթաթ ին հանձարը տես-  
նելով մէկ-քերան գովեցին, զարմացան ու կեցցէ  
ուռաւ կանչեցին. և իրենցմէ ամեն մէկը բո-  
ւոր ուժով աշխատեցաւ որ նորա պէս պարէ,  
այց որչափ և փորձեր արին, ամեննեին չկա-  
րողացան նորա պէս պարելու. ընդհակառակն  
պարել ուղած ժամանակները՝ ոմանք կողքի  
ուկնոնները և ամանք գլուխները ցաւցուցին:  
Եսկ Հանթաթ աթ արջն այն տեսնելով հասկա-  
ցաւ նոցա տգիտութեան չափը, և ընականապէս  
մաժամանկով, արհամարհական աչքով նայեցաւ  
նացա վերսց: Այս պատճառաւ շատ ժամ ժամանակ  
չանցած բոլոր արջերը դուռում գոչում վերո-  
ցին Հանթաթ արջին դէմ, և ,Ասրուե անհե-  
տացիք մեր մէջէն, յիմար անասուն, ասին

մէկ-ըերան. դուն մեզմէն խելացի՞ կուզես երևալ,  
ի՞նչ է՞։ Եւ ամենքը մէկէն Լանթաթին ետևեն  
ընկնելով՝ այնքան վատարանեցին, զրպարտեցին  
ու անարգական կերպերով վարուեցին հետք,  
որ վերջապէս մեր Լանթաթ արջն իւր հայրե-  
նիքէն փախչիլ հարկադրեցաւ։

## 46.

ԿՐՈՒՏԻ ՎԱՆԱՄՅ.

Երկու աշակերտ վարժատուն գնալու ժա-  
մանակ մէկ ընկոյզ (¹) գտան, մէկն ասաց „Ե-  
ռաջ ես տեսայ“։ միւսը՝ թէ „Գետնէն ես վե-  
րուցի“։ և այսպէս կռիւը տաքնալով՝ բանն  
այնտեղ հասաւ որ մէկմէկու յիշոցք (²) տալով  
անվայել խօսքեր ասացին։ Մարդուն մէկը<sup>1</sup>  
այդ միջոցն այն աշակերտաց մօտէն անցնե-  
լով, իմացաւ նոցա կռուի պատճառը, և մէջերը  
խաղաղութիւն ձգելու մտքով „Բերէք ընկոյզը  
ես բաժին անեմ, ասաց, ամօթ չէ՞ որ դորա  
համար կը կռուիք“։ Ընկոյզն առաւ ու կճէպը  
հաւասար կերպով բաժնեց. մէկ կտորը մէկին  
և միւսը՝ մէկալին տուաւ. իսկ ինքը բուն ըն-  
կոյզն ուտելով „Գնացէք, ասաց, և ուրիշ ան-  
գամ այսպիսի ոչինչ բաներու համար կռիւ չա-  
նէք մէջերդ“։

(1) Օրեխ ցրցան.

(2) Պյանի.

47.

ԳՈՐԾ (1) ԵՒ ՄՈՒԿԻՆ.

Գորտը մուկին դէմ հակառակելով՝ „Խրաւունք է, կասէր, որ ջրոտ տեղերը ես ժառանգեմ“։ Խսկ Վուկն ընդհակառակը պնդելով  
„Քրոտ տեղերն ինձի կվայելէ ժառանգել“ կասէր. թէև լաւն այն էր, որ երկուսն ալ միաբանէին ու առաջուան պէս սիրով կենային. վաճն զի մինչդեռ նոցա աչքերը մութ կոխած՝ կոիւը սաստկացընելու վրայ էին, ուրուրը (2)  
հեռուէն դիտելով յանկարծ վերէն վար թռաւ ու երկուսին ալ կերաւ, որով Ճշմարտուեցաւ այն առածը որ կասեն

„Խաիւ սիրողը կըռւով կերթայ,  
Ի՞նչ որ անէ՝ այն կը զըտնայ! :

48.

Բ Ա Ժ Ի Ն Ք

Ժամանակով քանի մի վաճառականներ մէկ մէկու հետ սիրով գործ բռնելով բաւական փող վաստակեցան ու սկսան հաշիւ տեմնել որ եղած վաստակն իւրեանց մէջ հաւասար բաժին անեն։ Խայց որովհետեւ բաժինքի ժամանակ շատ բիշ

(1) Լացուկա, առ. Խուռարազաւ.

(2) Տաճկերէն, Հայութ.

մարդ կը գտնուի ու առանց կռուի գործը վերջացրնէ, ուստի այն պարոններն ես մի այնպիսի վէճ հանեցին մէջերը, որ ծայր ու ճոխ չունէր. բաւական չէ այս, այնպէս կիանչէին, որ մէկ-մէկու ասածը ամենեին չէին հասկանար: Այնդեռ նոքա այսպիսի կրուոյ հետ էին, զրուն ձայներ լսեցին թէ „Արգիկ, շուտ արէք՝ դուրս փախէք, կրանկ կայ, կրանկ, թէ որ ուշանաք՝ գիտցէք որ կորաք:“ Պարոններու մէկը „Երես տեսնենք ի՞նչ կայ“ ասաց. միւսը՝ թէ „Ձէ, հազար ոսկիս չառած՝ տեղէս չեմ ելներ, և այլ միւսը՝ թէ „Եշապէս հաշիւ չլինիր. այսչափէ իմ առնելիքս, ինչու այդպէս կհաշուէք, եղբայրք:“ Աէկ խօսքով այնպէս տաքցել էին իւրեանց առնելիքին վերայ, որ մօռցել էին թէ կրակ ընկել է տուներնին, որով մուխը յանկարծ ամենուն խրզգեց. կրակն ալ հասաւ և ապրանքն իւրեանց տէրերուն հետ մէկտեղ այրեց ու մոխիր դարձուց:

## ՀԵԼԼԱՅ 9

49.

Վան դժմնախուուն կարու են ՏՊ.Ց. Խօխաննեան, բայ մախան Երկրուց արզայն թաթիկ, և ամ? արմ նարը դո Ար Փըլցնէ վերդ գեղեցիկ մաշճիասափ: Անմաս մինչ Պաթիկը ծարից փըշէկ: Եւ միաց նա յոյժ սաստիկ: Զիզ ուայ Ար Փըլցնէ վերդ գեղեցիկ մի սնոտի: Զես որքան սուդ կը նըստի: Համ պարուն. (1) Համ պարուն. (2)



Ղնբան կենդանեաց մէջ ամենէն վեր կհամարուի կապիկը, թէ ճարտարութեան ու ճարպիկութեան և թէ խելքի ու գործունէութեան կողմանէ :

Ծստուած թէպէտ խօսելու կարողութիւն չէ տուած նորան, բայց իւր բնատուր խելքովն ու ճարտարութեամբը այնպիսի նշաններ կանէ, որ ամեն ուզեցածն իւր տիրոջը կհասկացընէ: Թէ որ զարնես՝ կուլայ՝ առանց արտասուքի, և բարկացողական ձայններ կհանէ: Ծռհասարակ թէ ձեռվ ու թէ բարբով՝ աղտոտ, տգէտ գող, խարեբայ ու նախանձոտ կենդանի է:

Չնայելով այդ պակասութիւններուն մարդիկ նորա յարմարութիւնն ու գործունէութիւնը տեսնելով, այլևայլ ժամանակ սովորեցուցած են աման լուանալ, տուն աւլել, ջուր բերել,

(1) Օնօթան, մոյմունը զիստ վզուս բավարաց լուս

թմբուկ զարնել, պարել, չուանի վերայ խաղալ,  
թատրոնի մէջ ծիծաղաշարժ գործողութիւններ  
անել, և այլն, և այլն:

Եռանց մարդու սովորեցընելուն ևս, կապիկն  
ընդհանրապէս այնպիսի բնաւորութիւն ունի,  
որ մէկ անդամ տեսած բանին նմանը անել  
կաշխատի, ինչպէս որ հետազայ առակէս կերեի:

Եշխատասէր գեղացիին մէկը սովորութիւն  
արած էր ամենայն օր բահն ուսին դրած՝  
առաւօտը կանուխ դաշտ ելնել ու երկրագործու-  
թեան պարապել, որով այնպէս գեղեցկացու-  
ցած էր իւր վարուցանքը, որ անցնող դար-  
ձողը երանի տալով նորա տիրոջը՝ զանազան  
գովեստներ կուտար մշակողին: Կապիկին մէկն  
ալ, որ մերձակայ անտառին մէջ կկենար, լսե-  
լով գեղացիին տրուած գովեստները, նախան-  
ձեցաւ ու „Ճրի, ասաց ինքնիրեն, ես ալ ձեռք  
զարնեմ նորա պէս աշխատելու. այն ուսին  
դրած փայտի կտորովը չէ՞ որ այնքան գովա-  
սանք կը լսէ...“ Եյս ասաց ու գնաց իւր հա-  
սակէն աւելի մի կոշտ փայտի կտոր գտաւ և  
իւր ինելքով իբր թէ սկսաւ աշխատանքի, այս-  
ինքն առաջ այն փայտին կտորը զրկեց, յետոյ  
առաւ ուսին վերայ դրաւ, քիչ մի կենալէն յե-  
տոյ՝ շալակեց, ոտքի տակը դրաւ, պոչին վրան

առաւ, վերէն վար զլորեց, մէկ խօսքով այնչափ դարձուց, այնչափ խաղորուց այն փայտը, որ արին-քրտինք մտաւ կապիկը, բայց ոչ մէկ մարդէ գովասանք չը լսեց: Եւ ի՞նչպէս կրնար գովասանք լսել, երբ ձեռքի աշխատանքն անօգուտ էր: Արեմն մարդս այն ժամանակը միայն պիտի գովեստի կամ հնորհակալութեան սպասէ, երբ իւր աշխատանքը օգտակար լինի մարդկութեան:

ԿՐԻԱՑ (1) ԵՒ ՄՊՈՎԷՍ (2). Ելոն դպջու

մուղմաղարկեղ Արիայ, կանչեց Առողէս ու աց  
— Ինձի խեղձ ինչո՞ւ կասես:

„Հապա գուն ուր որ քակես,

Տունդ ալ հետք կը կըրես:

— Չէ, ես խեղձ չեմ, քո արե,

Օգտակար բեռն է թեթև:“

52.

ՄԵՇՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԱՇԾՆ Վարդան Մամիկոնեան սուրբ նահատակը՝ մեծ նախարար էր Հայոց ու մեր սուրբ Աահակ պարթև հայրապետին թոռը: Երբ 450 թուականին Փարսից Յաղկերտ երկ-

(1) Կերպահա.

(2) Խէւ, քէրթնքեւէ.

բորդ մոխրապաշտ թագաւորը սոսկալի հաղածանք հանեց Հայոց դէմկ խարդախութամք Պարսկաստան կանչեց Արդանին ու Հայոց գլխաւոր նախարարներուն, և ստիպեց որ կամ կրակապաշտ լինին և կամ մահու դատապարտուին իւրեանց ընտանեօքը, Մեծն Արդան բոլոր Հայոց կողմանէ պատասխան տուաւ թէ անհնարին է այդ բանը, և հեռատես պատճառներով ևս ցոյց տուաւ Հայոց այնչափ հաւատարիմ ծառայութիւնը Պարսից տէրութեան. բայց Յազկերտ՝ կրօնամոլութենէն աչքը մութ կոխած առաւել ևս կատաղեցաւ և երդում արաւ բոլոր նախարարներուն ջնջել տալ թէ որ չխոնարհին արքայական հրամանին ու արևապաշտ չինին: Արդան տեսնելով որ ճշմարտութեամբ պիտի չկարողանայ թէ ինքնիրեն և թէ իւր սիրելի ազգին այն վերահաս վտանգէն ազատելու, մէկ ազատամիտ պարսկի համողելովը երեսանց արկապաշտութիւն ընդունեց ու Յազկերտի հրամանաւը 700 պարսիկ մողերու հետ Հայաստան յուղարկուեցաւ որ իրը թէ Հայերուն կրակապաշտութեան դարձնէ: Բայց ազգասէր Արդանը տեղ համնելուն պէս՝ Յովսէփի կաթողիկոսի և նորա 100 հազար համախոհներուն հետ միաբանեցաւ, որք „Հաւասարեսցի մահս մեր մահուան արդարոց... հաճեսցէ Կատուած ընդ

կամաւոր պատարադս մեր և միտացէ ղեկե-  
ղեցի իւր ի ձեռս հեթանոսաց՝ ասելով՝ Վառ-  
բայր գեղի Տղմուտ գետին մօտ (451 թ. յու-  
նիսի 2-ին) այնակի պատերազմ արին թշա-  
մեաց դէմ, որ մէկ օրուան մէջ 3544 պարսիկ  
մեռցին թէւ սուրբ Վարդսն ևս նոյն  
քրիստոսադէն պատերազմին մէջ մեռաւ 1036  
զօրականաց հետ, որը հաւատոյ և հայրենեաց  
վերայ խրեանց կեանքը դրին, և որոց յիշա-  
տակը ամենայն տարի Խուն բարեկենդանի հինգ-  
շաբաթի օրը կկատուրէ մինչեւ ցայժմ մեր Հայ-  
աստանեայց սուրբ Եկեղեցին: Ասկէ զո , մայա-  
դա՞ թէ? — ու ունախաճ խոյածանչաք ձմաց  
սորմ , ժղուա՞ սղմանոյիա՞ , զո՞ և զա՞յս լմանց  
այս ոսւողա՞ գունդունա՞յս ձսով “ բամք  
ու մէրդու ոսւցուա հմաներով մց լին վմախուա-  
նէս ԳՏՏՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵՒՆ: 53  
ու ունախաճ լամանքի խոյածանչաք սմջա-

Հարուստ վաճառականի մի որդի, որ այլե-  
այլ գպրոցներու մէջ քանի մի տարի անաշխատ  
կերպով ժամանակ անցնելով՝ գրեթէ բան սով-  
րած չէր, ինքնիրեն վերայ մեծ համարմունք  
ունենալով՝ շատ բանի վճիռ կրտտար առանց  
դործին իսկու թեանը տեղեկանալով, իւր բարեկամներէն  
մէկուն կհարցրնէ թէ ազիուն տարիքնինչպէս  
կիմացուի: — Եկուաներէն կիմացուի՝ կպատաս-

իւանէ բարեկամը։ Եյս խօսքս իմանալէն յետոյ կերթայ մարդն ուղղակի ձի ծախողին և „թաէ որ կէնճ ու լաւ ձի ունիս ծախու, ցուցուր նայեմ“ կասէ։ Զիավաճառն իսկոյն վեց տարեկան գեղեցիկ ձի մի կհանէ ու կըերէ դիմացը կը կանգնեցընէ։ Գնել ուզողը շուտով ձիուն բերանը կրանայ և ակռաները լաւ համբելէն վերջը, կդառնայ արհամարհանօք կասէ ձիուն տիրոջը թէ „Եյս ձին քու քովդ պահէ, ինձի պէտք չի գար. ի՞նչ պիտի անեմ երեսուներկու տարեկան ձին։—Աւսկի՞ց իմացար, պարոն, որ երեսուներկու տարեկան է, կհարցանէ զարմանալով ձիավաճառը։— Եյդ հարցընել պէ՞տք է որ, ակռաները համրէ, եղաւ գնաց“ կասէ արհամարհանօք, հարուստ վաճառականի՝ խելքի կողմանէ աղքատ որդին, ու երես դարձընելով կհեռանայ ձիավաճառէն։

## 54.

ԿՈՅԲ ԵՒ ԿՈՎ. (1)

Խեղճ մարդուն մէկը, որ շատոնցի վերիւր աչքին լոյսէն զրկուած էր, մէկ երեկոյ՝ ուշժամնակ՝ գաւազանը ձեռքն առած ասդիս անդին ընկնելով կերթար մեծ ճանապարհի վերայէն ու ինքնիրեն կասէր. Եյս ինչ փորձանք է որ

(1) Խրոմօն, թագավոր.

գլխուս եկաւ, թէ որ շունս չհիւանդանար՝ ինձի ճամբայ կցուցընէր ու այս մօտի քաղաքը կերթայի. այժմ կիմանամ թէ որչափ կարօտ եմ եղած շունիս. գոնէ անցուդարձ անող չկայ որ կարողանայի հարցընել թէ արդեօք բռնած ճամբաս շիտա՞կ է թէ ոչ: Կերեի թէ պիտի հարկադրուիմ այս գիշեր ճամբուն վերայ քնառալ, որով խեղճ շունս ալ քաղցած պիտի մնայ:

Կոյրը հազիւ թէ խօսքը վերջացուցել էր և ահա մէկ մարդու ձայն կը լսէ հեռուէն, որ նոյն պէս տրտնջալով կասէր. „Եյս ինչ խեղճութիւն է որ ինձ հանդիպեցաւ. վեր ու վար ճամբաներուն մէջ ոտքս կոտրեցի, այնպէս՝ որ գետին կոխել չեմ կարող. կերեի որ այս գիշեր ճամբուն վերայ պիտի մնամ. հիմա ով գիտէ, ծնողքս ինչ անհանգստութեան մէջ են:

— Ո՞վ ես դուն, հարցուց կոյրը, և ի՞նչ բանի համար կգանդատիս:

— Ե՞ն, պատասխանեց կաղը, ես մէկ խեղճ մարդու զաւակ եմ. գեղի տունէն անմտութեամբ մինակ քաղաք դառնալ ուզելով՝ ճամբուն գալու ժամանակս գլխուս փորձանք պատահեցաւ, ոտքս կոտրեցաւ ու ցեխին մէջ ընկայ մնացի:

— Ա՞խ, խեղճ տղայ, ասաց մեղքընալով կոյրը. բայց ասա տեսնեմ, ճամբան կերեի՞ թէ ոչ:

— Ճամբան շատ լաւ կերեի, ասաց կազր-  
բայց ի՞նչ օդուտ որ քայել չեմ կարող, ասք  
թէ ոչ իսկոյն կերթայի և հօրս ու մօրս  
կմիամտացընէի:

— Ես ալ մե՛զը որ տեսնել չեմ կարող, ասդա  
թէ ոչ շուտով տուն կհաննէի և խմախեղ  
շունիս կերակուր կռւտայի:

— Ենչ, միթէ կոյր ես, հարցուց կազր

գարմանալով:

— Եյ՛, կոյր եմ, պատասխանեց խեղճը:

— Թէ որ այդպէս է, արի դորա մէկ հսկը<sup>1</sup>  
գտնենք ու այս փորձանքէն երկուքս ալ ա-  
զատուինք:

— Ենչ հնար պիտի գտնենք:

— Հնարն այս է, ասաց ճարսիկ կազր, որ  
դուն քու ոտքերդ ինձի տաս, իսկ ես քեզի  
աչքերս, որով երկուքս այլ քաղաք կհաննինք:

— Եյդ ի՞նչպէս կարելի է, ասաց հետա-  
քըքը թեամբ, կոյրը:

— Ենչպէս պիտի կարելի լինի Ես մէկ  
թեթե տղայ եմ, իսկ դուն, ինչպէս կերեի  
ձայնէդ՝ չափահաս մարդ, որեմն եթէ ցո-  
ժարիս ինձ ուսիդ վերայ աւնուէ և տանել, ես  
ալ քեզ ճամբայ կը ցուցընեմ, որով երկուքս  
ալ քաղաք կհաննինք:

— Քաղաքը հեռու է ասկէց:

— Ոչ, շատ հեռու չէ. ճրագները կերեի:

—Երանի՛ քեզ որ կտեսնես: Ես արդէն քսանեհինդ տարի է որ աչքիս լուսէն զրկուած էմ: Ո՞չ մեծ բան է մարդուս աչքի լցող« աւելցուց կոյըը հառաջելով, ու կամաց կամաց կաղին մօտեցաւ, ու չորս ոտքի վրայ եկաւ:

Կաղը կուրի ուսերուն վերան ելաւ նստաւ ու տասնեհինդ վայրկենի մէջ քաղաք հասան: Վայրը տարաւ կաղին մինչեւ նոցա տունը, որոյ ծնողը տեսնելով մեծ շնորհակալութիւն արին իրեն. և կաղին հայրը ճամբայ ձգեց կուրին մինչեւ նորա բնակարանը:

Եցսպէս ահա այն երկու խեղճերը մէկմէկու օգնելով՝ երկուքն այլ պատեցան ճամբան վեշրայի գիշերը մնալու վտանգներէն:

‘Նոյն բանը կպատահի նաև ամենայն մարդու: Սովորաբար մէկուն չունեցած կատորելութիւնը մէկալը կունենայ. այն բանը որ սա չէ կարող անել, նա կանէ: Եցսպէս մէկմէկու օգնելով, ոչ մէկ բանի կարօտութիւն չենք ունենար, ընդհակառակն թէ որ մէկմէկու չօգնենք, ամենքս ալ զանազան խնդութիւններու մէջ կընկնինք:

55.

ԱԱԾԲՆԿՑՈՒԽ ԲԱՐՈՅԵԱԿԱՆ ԽԲԱՏՆԵՐԸ

Ըշխարհիս մէջ ինչ որ անես, պէտք է նայիս որ այն ժամանակի մարդոց անհաճոյ բան չլինի արածդ. և աշխատէ որ միշտ յարդութեան նշան ցուցընես նոցա:

Ծնկերութեան մէջ ուրիշներու խօսելու ժամանակը՝ դուն անուշագիր մի՛ լինիր. ոտքի վերայ կեցողին դիմացը մի՛ նստիր, քեզի չընկած բանը մի՛ խօսիր:

Ծողոքորթութենէ հեռի կեցիր. ով որ քու վրադ սէր չի ցուցըներ՝ նորա հետ կատակ (1) մի՛ աներ :

Ծնկերութեան մէջ առանձին բան մի կարդար, թէ որ հարկ լինի ներողութիւն խնդրելով արա: Վինչե որ մէկը քեզմէ չինդրէ, դու կարդացողին կամ գրողին քով մի՛ մօտենար, որ նորա առաջի գիրքը կամ թուղթը տեսնես:

Երբ քանի մի հոգի որ և իցէ բանի վերայ կխօսակցին, դուն քո կարծիքդ մի՛ զրուցեր՝ մինչե որ քեզի չարցընեն:

Արիշի դժբաղդութիւններուն վերայ մի՛ ուրախանար՝ թէև թշնամիդ լինի:

(1) Մայկա, ոռհ. Հափու.

Երբ քեզմէ պատուաւոր մարդու մի հանդիպիս, խոկոյն մէկդի կեցիր. մանաւանդ երբ նեղ դրան կամ ճանապահի մէջ գտնուիս՝ թողոր առաջ ինքն անցնի:

Հարկաւոր գործի վերայ խօսելու ժամանակ աշխատէ որ խօսածդ քիչ բայց ճիշդ լինի:  
Երբ հիւանդի մի տեսութեան երթաս, բժշկական տեղեկութիւններ մի՛ ծախեր, թէ որ իրօք չգիտես:

Թէ գրելու և թէ խօսելու ժամանակ ամենուն պէտք եղած պատուանունը տուր՝ նոցաաստիճանին ու երկրին սովորութեանցը համեմատ:

Մեծերուդ հետ խօսելու ժամանակ մի՛ պնդեր կարծիքիդ վերայ, հապա քու դատմունքդ աւ պարկեշտութեամբ ուրիշի կարծեացը համաձայնեցուր:

‘Եայէ որ քեզի վիճակակից կամ արհեստակից մարդուն շատ խորհուրդ չտաս, վասն զի շուտով ատելի ու զզուելի կլինիս:

Երբ մէկուն խրատ կուզես տալ, նախ մտածէ որ հրապարակաւ տալլը լաւ է թէ առանձին. և ապա շուտ՝ թէ ժամանակ անցնելէն վերջը: Եյս մտածմունքէն յետոյ՝ խօսելու նիւթերդ լաւ սերտէ. յանդիմանելու ժամանակ ամենեին բարկութեան նշան մի՛ ցուցըներ:

Ո՞ր և իցէ ժամանակ երբ մէկը քեզի խրատէ, շնորհակալութեամբ ընդունէ: Եթէ զիտէս որ յանցաւոր չես, ըստ ժամանակին և տեղւոյն խմացուր անմեղութիւնդ քեզ խրատողին:

Հարկաւոր բանը կատակի մի՛ զարներ. կծու խօսք ամեննեխն մի՛ խօսիր, որ ատելի չլինիա. թէ որ զուարձալի խօսք մի պիտի զբուցես՝ նայէ որ դիմացի մարդոցդ մէկուն ալ ծանր չդայ:

Երբ ո՞ր և իցէ մարդու յանդիմանել ուզենաս, նայէ որ դուն ալ այն յանցանքը չունենաս. վասն զի օրինակն աւելի կազդէ քան՝ զգեզեցիկ խրատները:

Եթէ կուզես որ վրադ համարմունք ունենան, նայէ որ գովելի մարդոց ընկերութեան մէջ զտնուիս: Վւելի լաւ է մինակ կենալը, քան գէշ ընկերութեան մէջ մտնելը:

## 56.

ԿԱՅԱՔ ՊԵՏՐՈՎԱՆԱՍԻՐ (1) ՄԱՐԴՈՅ.

Ա իճարանելու սէրը անիմանալի պակասութիւններէն մէկն է: Մարդ կայ որ կարծես թէ խօսակցութենէն համ շառնուր՝ թէ որ որիշին չընդդիմարանէ. կարծես թէ կսպասէ որիշին մէկ խօսքը բռնելու որ մէջ բանայ,

(1) Կառասէր.

եթէ ոչ մտքի վերայ՝ գոնե բառին վերայ, ինչ  
պէս որ վիճարանութիւններուն շատը բառին  
վերայ է՝ մէկմէկու միտք չհասկանալէն կամ  
հասկանալ չուզելէն: Վանաւանդ երբ միանգամ  
վիճարանութիւնը տաքնայ, կարծիքի տարրե-  
րութիւնը մէկդի գրուի ու հստարակօրէն  
բառերու վերայ պտրտի մէջը: Հաւան վիճարանութիւնն  
իմ իմ վիճարանութիւնն է. բայց վիճարանասէրն ինքնիրեն  
խորնահաւանութիւնէ շատ հեռու ցուցընելու  
համար: Վիճարանութիւնն է դիտութիւնները  
ծաղկեցնողը, կամ վիճարանութեամբ ձշմար-  
տութիւնը կիմացուի՛ և ուրիշ սորա նման  
սուտ պատճառներ, չմտածելով՝ թէ որչափ  
տարրեր բան է՝ ձշմարտութիւնը վիճարանելէն,  
ու չդիանալով որ մարդ, կրից մէջ ոչ բան կհաս-  
կանայ և ոչ բան կրնայ հասկացընել: Երբ  
երկու հոգի տաքցած մէկմէկու հետ կվիճարա-  
նեն, այնպիսի խօսքեր կենէն նոցա բերնեն, որ  
բոլորովին իրենց խնդիրէն դուրս է. առաջ հան-  
դարտ կակսին, յետոյ բանը կտաքնայ, կոռուող  
կատուներու կը նմանին, որ մյաւ մյաւով  
կսկսին ու մըռմըռուալով կվերջացընեն. թէ որ  
խրեանց թաթէրը մէկմէկու դէմ չվերցընեն,  
լեզունին դրէթէ իրարու կհասցընեն: Երկուքն  
ալ կարծելով որ իրենց ասածն է ձշմարիտը՝

մէկմէկու իւստ չհասկացող կկանչեն. բայց եթէ մէկն ուզենայ իմանալ թէ որո՞ն ասածն է ճշմարիտ,—շատ անգամ և ոչ մէկունը: Այս պատճառաւ կոխուր դաղրելէն վերջը՝ երենցմէ ամեն մէկը ինքնիրեն յաղթող կկարծէ: Երկուքն ալ իրարու խօսքը ոչ թէ հասկանալու համար կը լսեն, այլ դէմք խօսելու, այնպէս՝ որ բանը ամօթի կընկնի՝ իրենցմէ մէկուն առաջ լուղին կողմանէ: Դիտելու բան է որ երբ մարդու ը լուելու համար խօսելու լինի, այն խօսուածին մէջը ի՞նչ խելք կլինի: Յոէ որ երկայն մտածելէն յետոյ ևս շատ անգամ մարդուս խօսածը խելքով չինիր, որչափ ևս առաւել կիրքով ու առանց մտածելու հարկաւոր եղած ժամանակը մէկմէկու ետեւէ խօսել կամ բերնին եկածը դուրս տալ՝ վերջին խօսողը ինքը լինելու համար, ի՞նչ համ-հոտ կլինի այն խօսքին մէջ:

Շատ անգամ կտեսնենք որ թէպէտ խելացի մարդիկ բարակ բաներու խելք կհացընեն, բայց իրարու ասածը չեն հասկանար. վասն զի այն բարակ բաները սովորելու և հասկանալու համար կը լսեն կամ կկարդան. իսկ վիճաբանելու ժամանակ իրարու խօսքը թէ որ լսեն մէկմէկու դէմ խօսելու համար կը լսեն, թէպէտ աւելի իւրեանց ականջներն ու լեզուները մէկտեղ կուզեն բանեցընել չես զիտեր ով է

խօսողը՝ ով է լսողը. աւելի ստոյգն այն է, որ  
լսող ամենեին չկայ:

Վերջապէս վիճաբանասէր մարդը ինքն-  
իրեն ծիծաղելի կանէ, երբ բերանը ուրիշ խօսք  
չմնար, ու յաղթուիլը յայտնի չանելու համար  
„Բերած պատճառներդ բաւական չեն համոզելու“  
կասէ: Կուզէ որ ամեն բանի պատճառը մա-  
տեմատիբական ապացուցի պէս լինի, երկու  
անգամ երկուքը չորս անելու նման, որ կա-  
րելի լինի իրեն լոեցընել. թէև կարելի է որ  
կուուի մէջ նորա ստուգութեան վերայ ևս տա-  
րակուսի: Մարդ եղած է որ ժամը բանին լի-  
նելու վերայ տաքցած ժամանակը, արեւոն մըտ-  
նեն ևս տեսնելով՝ „Երեք կը սիալի“ ասած է:

Շատ դժուարութեամբ կառնուի այս պակա-  
սութեան առաջքը, թէ որ մարդս և մանկու-  
թենէ չջանայ ինքնիրեն կրթել, այսինքն այն-  
պէս միտքը դնէ, որ ինքն իրեն մարդ, միշտ  
կարող է սխալուիլ. ուրեմն և հարկ է որ շատ  
անգամ իւր կարծիքը փոխէ: Ճշմարտութեան  
դիտութիւնը կապահանջէ որ մարդս շատ անգամ  
այս զոհս անէ. վասն զի այս ընթացքը բոնող-  
ներն են միայն որ արժանի կլինին ճշմարտու-  
ասելու պանծալի անունին:

57.

ԽՈՍՔ ՀՀԱՄԿԵՑՈՒԵԼՈՒՆ ԱՐԳԵԼ. ՔՆԵՐԸ.

Երբ տեսնես որ դիմացիններդ քու խօսքերէդ չեն համոզուիր, դիմացիր որ արգելքները սոքա են. կամ քու կարծիքդ ծուռ է, կամ բաւական ճարտասանութիւն չունիս միտքդ լաւ հասկացընելու: Եռաջին երկուքը քու պակասութիւնդ են, երրորդին անպատճառ պէտք է ներողամիտ գտնուիս. իսկ եթէ բարկանաս, նոյն է որ կուրին չտեսնելուն, կաղին երերացն կամ խլին չը լսելուն նեղանայիր: Մարդուն մէկը դիմացինին անձոռնի մէկ խօսքին դէմ տաք տաք խօսելէն յետոյ՝ կդառնայ կհարցընէ՝ քովինին թէ „Հոգիդ սիրես, իրաւունք ունի՞մ թէ ոչ:—Իրաւունք չունիս, կպատասխանէ՝ քովինը. վասն զի դիմացինիդ յիմար եղածը մոռցար, և հետը այնպէս խօսեցար, իբր թէ շատ խելացի ու խօսք հասկըցող մարդ էր:

ՈՒԽՈՒՄՐՆ ՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԲ ՀՀՆՉ ԲԱՆԻ ՀԱՅԱՍՏ Է:

Ուսումը մարդուս մտքին համար է, կրթութիւնը բոլոր անձին համար. ուսման նպատակն է ձշմարտութիւնը գտնել, իսկ կրթութեան նպատակը՝ թէ ձշմարտութիւնը, թէ բարին, թէ օդտակարը և թէ վայելուչը ձեռք ձգել:

Ուսումը առանց կրթութեան անօգուտ է, երբեմն ալ վնասակար։ Պառաւ կնկան մի տուած կրթութիւնը շատ անդամ աւելի օգտակար կարող է լինել, քան թէ մէկ երեւելի փիլիսոփայի տուած ուսումը։

58

ԸՆԿԵՐ



Աենդանեաց մէջ ամենէն աւելի մարդուս ընտանին ու հաւատարիմը շունն է. և թէպէտ քառասունէն աւելի տեսակ ունենալուն պատճառաւ ամենուն ձենն ու մեծութիւնը տարբեր է, բայց ընդհանրապէս ընաւորութիւնները մէկ է։ Ըստ սովորական կերակուրը միսն է, և ստամոքսը այնչափ տաք է, որ ոսկոր ալ կմարսէ։ Որչափ վազէ, այնչափ կրտաքնայ ու կը փրփրի, բայց ամեննեին չի քրտնիր, և միայն լեզուն դուրս հանելով կզովանայ։ Թէթէ հի-

ւանդութիւն ունեցած ժամանակը՝ կերթայ շանհաղը ասուած բոյսը կուտէ, որ սիրով ետ գայ. որով և կառողջանայ:

Ծունը թէև կրթութիւն ստանալով՝ այլ և այլ ծառայութիւններ կանէ իւր տիրոջը, և իւր պարտքը սիրով ու հնազանդութեամբ կկատարէ. բայց նորա ամենէն աւելի գովելի յատկութիւնը իւր տիրոջ վերայ ունեցած կարգէ դուրս սէրը, հաւատարմութիւնը, արթնութիւնը, ճարտարութիւնն ու խելացիութիւննէ, ինչպէս որ հետագայ պատմութիւններէն կտեսնուի:

### Ե.

Հովուին (<sup>(1)</sup>) մէկը օր մի իւր շունն ու չորս տարեկան տղան հետք մէկտեղ դաշտը կտանի. բայց որովհետեւ ինքը դիմացի լեռան վերայ ելնելու ժամանակ՝ կտեսնէ որ տղայն չի կրնարքայել, կթողու լեռան վարը ու կպատուիրէ որ տեղէն չշարժի մինչեւ իւր գառնալը: Հովիւր հաղիւ թէ լեռան գլուխը կհամնի, յանկարծ օդը կը պղտորի, լեռը մշուշ կպատէ, ցորեկը գրեթէ գիշեր կդառնայ, խեղճ գեղացին շուտով լեռնէն վար կիջնայ դէպի իւր տղուն կեցած տեղը, բայց մութը սաստկանալուն պատճառաւ ճամբան կկորսընէ, և վերջապէս յոյսը կտրած

(1) Պատյխ, աշ. շորոն.

լալով ողբալով մէկ հովիտի<sup>(1)</sup> մէջ կը մտնէ ու այն դիշերը հոն կանցընէ: Առաւօտք կանուխ կենէ այն տեղէն ու դարձեալ առաջուան տեղը կերթայ ու կտեսնէ որ տղան չկայ. ուրիշ տեղեր կվազէ, ասդիս անդին կը փընտուէ ու ոչ մէկ տեղ չգըտնելով՝ սիրտը կոտրած կդառնայ իւր տունը կերթայ: Հօն կիմանայ որ առջի օրը շունը տուն գնալով՝ մէկ կտոր հաց առել փախել է: Աելնէ դարձեալ կը փընտուէ տղուն օրերով, և ամեն իրիկուն տուն դարձած ժամանակը կը լսէ որ շունը նորէն հացի կտոր տարել է տունէն: Ո՞էկ օր ալ հովիւր տունը կսպասէ, և շունը եկածին պէս՝ նորա ետևէն կերթայ, որ իմանայ թէ հացին կտորը ո՞ւր կտանի: Շունը երթալով՝ նախ մէկ բարձր լերան վերայ կենէ, և ապա ուղղակի վար իջնելով մէկ այրի մէջ կը մտնէ: Ո՞հ, ո՞րչափ կզարմանայ հովիւր, երբ կտեսնէ որ իւր զաւակը լալով նստած է մի փոքրիկ աղբիւրի մօտ և շան բերած հացի կտորին կըսպասէ:

Վչքերն ուրախութեան արտասուօք լցուած կվազէ կպագնէ որդուն ու շանը, և փառք տալով Աստուծոյ իւր տունը կդառնայ, իմանալով որ մշուշի ժամանակ տղան ճանապարհը կորսնցընելով՝ նախ լեռան գլուխն ելեր է հայրը վնտուելու և ապա այնտեղէն ալ կամաց կա-

(1) Հօյնեա.

մաց իջնելով մինչև այրին բերանը հասել ու  
անձարացած այնտեղ մնացել է:

Վ.

Կոյր մուրացկանին մէկը սովորեցուցած շուն  
մի կունենայ իրեն առաջնորդ, որ ոչ միայն  
իրեն զանազան վտանգներէ կազատէր, հապա  
տներու և խանոթներու առջեւ ալ կտանէր  
որ ողորմութիւն տան տիրոջը: Երբ աղքատը  
կոկսէր ողորմութիւն խնդրել, շունը գետնին  
վերայ երկրնցած կպառկէր. իսկ երբ պատուհա-  
նէն փող կամ հաց կը նետէին, իսկոյն կվա-  
զէր կառնուր բերանով ու աղքատի գլխարկին  
մէջ կը դնէր:

Գ.

Մարդուն մէկը ձեւացընելով թէ Հնդկաս-  
տանէն Ենդղիա եկած վաճառական է, կերթայ  
իջնանին մէջ մէկ խուց կը բռնէ իրեն համար  
և կասէ տիրոջը՝ թէ „Եյս երեկոյ իմ մնտուկս  
կը դրկեմ, առաւօտը կանուխ ալ ես կուգամ“:  
Երիկուան գէմ յիրաւի, երկու հոգի մնտուկը  
շալկած կը երեն կհանեն վեր և այն մարդուն  
բռնած խուցը կը դնեն: Եմեն մարդ իւր տեղը  
քաշուելէն յետոյ, տանտիրոջ շունը մէկ ձայն  
կը լսէ, յանկարծ կելնէ իւր տեղէն ու կերթայ  
այն մնտուկը դրուած խուցին առջեւ կկանգնի  
ու բոլոր ուժովը կհաջի: Տանուտիրոջ ծառա-

ները շան հաջուածքն իմանալով՝ նոր վարձու տրուած խուցին մէջ կը մտնեն և կտեսնեն որ շունը երբեմն մնտուկը կը ճանկըռտէ հաջելով, երբեմն ալ ծառաներուն ոտքերը կփաթթուի պոչը խաղցընելով։ Եյս պատճառաւ ծառաները կատկածի կերթան, մնտուկը վերուվար կը աշեն և կիմանան որ մէջը մէկ շարժուն բան կայ։ Շանալին կկտրեն և բանալէն յետոյ կը տեսնեն որ այն սուտ վաճառականը մնտուկին մէջ ողջ պառկել է այն մտքով՝ որ գիշերն ելնէ գողութիւն անէ։

Դ.

Վաճառականին մէկն առնելիքի համար ուրիշ քաղաք երթալով՝ շունն ալ հետը կտանի։ Դառնալու ժամանակ մէկ քանի մղոն քալելէն վերջը կը յոգնի, ձիէն կիջնայ ու մէկ ծառի տակ կը նստի, քսակով ստակն ալ քովը կը դնէ։ Քիչ մի հանգչելէն յետոյ, միտքը բան կընկնի, շուտով տեղէն կենէ և ստակը մոռնալով՝ ձի կը հեծնի ու կտկտի ձին վաղցընելով իւր տեղը դառնալ։ Շունը կտեսնէ որ տէրը քսակով փողը ծառին տակը մոռցաւ, կփորձէ առնուլ բերանով, կնայի որ ծանը է, չըկրնար վերցընել։ վաղելով տիրոջ ետեէն կհասնի, և հաջելով ու ոռնալով կաշխատի տիրոջ միտքը ձգել։ Երբ կտեսնէ որ տէրը

չըհասկանար, կսկսի ոտքը խածնելու պէս անել։ Վաճառականը ուրիշ մտածմունքներով զբաղած՝ կկարծէ թէ շունը կատղել է, քիչ մի կկանգնէ, ցաւակցաբար կնայէ իւր հաւատարիմ շունին վերան ու կսկսի տարակուսիլ թէ ի՞նչ անէ։ Վերջապէս վախնալով որ շունը յանկարծ չխածնէ իրեն ու շանը սիրոյն համար իւր կեանքը կորսուի, կհանէ մէջքէն ատրճանակը (1), երեսը մէկդի դարձուցած՝ կտարապէ շանը վերայ խեղճ շունը խկոյն կընկնի ու կսկսի գետնին վերայ քաշկըուտուելով արիւնլուայ իւր տիրոջը մօտենալ։ Տիրոջ սիրով չդիմանար, կզարնէ ձիուն ու կերթայ, մտքէն ափսոսալով որ սիրուն շնիկս աւելի լաւ էր ինձ համար քան բերած ստակս։ Եյս խօսքին վերայ ձեռքը կերկընցընէ փողին քսակը նայելու և կտեսնէ որ տեղը չէ։ Խակոյն միտքը կուգայ արած անխելքութիւնը, կիմանայ իւր շանը ողիկ ողիկ գալուն պատճառը, կդարձընէ ձիուն գլուխը և վազցընելով ուղղակի կերթայ քսակը նայելու։ Յանկարծ կտեսնէ որ շունը այնպէս արիւնլուայ ու գրեթէ կիսամեռ քաշկըուտուելով գնացել է մինչև այն ստակին քովը և պահպանութիւն կանէ. ուստի իւր տէրը տեսածին պէս՝ չնայելով որ վերքի ցաւէն հազիւ թէ.

(1) Պատուղեն.

շունչ կառնու, դարձեալ կաշխատի պոչը շարժել որ նորա քովն երթայ; Տէրը սաստիկ մեղքընալով կիջնայ կշոյէ իւր հաւատարիմ շունին, բայց քանի մի վայրկեանէն խեղճ շունն իւր վերջին շունչը կը փչէ:

## 59.

ԱՊԵՐԱԿՏՈՒԹԻՒՆ

Մարդուս սրտին մէջ բուժնող մոլութեանց ամենէն ցածն ու անարգն է ապերախտութիւնը. բայց և այնպէս քիչ սրտեր կան որ այդ դարշելի պակասութիւնը չունենան: Ապերախտի սիրտը անապատի կը նմանի, որ երկինքէն իջած անձրեն անյագաբար կծրծէ, կուլ կուտայ ու ամենեին բան չի բուօցըներ: Շատ անգամ ապերախտն իւր բարերարին երախտիքը չճանաչելէն զատ՝ չարիք ալ կուզենայ անել նորա դէմ, ինչպէս որ Եզրովոսի հետագայ առակներէն կտեսնուի:

## 60

ԵՐԿՐՈՎԱԳՈՐԾ ԵՒ 02.


Երկրագործին մէկը՝ ձիւնին մէջ մի պաղած ու կիսամեռ օձ գտաւ. Խղճաց վերան՝ վերուց իւր խուցը տարաւ և այնչափ իննամեց, որ քիչ քիչ օձը հոգի առաւ և իւր բնական ոյժն

ստացաւ: Քայլց բանն այս է, որ այն օձին աշուածին գործն եղաւ իւր բարերարին դեմ ելնելու ցավթկել որ խածնէ: Ավագակերախոտ, առաջիրեն զարմանալով, երկրագործը այս ի՞նչ է քու արածդ, ես քու կեանքդ քեզի դարձուցի: իսկ դուն իմս առնո՛ւլ կուզես: Այս ասելէն վերջը, մէկ հաստ փայտով զարկաւ գլխուն ու մեռուց:


Յաման ներյան քունուոյ ջն միուղս սարզա՞ Ա զմէկ նշանակացին Յմրզաւու ու մնաց միանին պար բայ որ մաք դմուս վիզ սկյանը և պայլ կամացինդիր: Գաւթ եւ սորունս (1) տասնիւր միւշ ծանչ:

Ժամանակով գայլը մէկ ոչխար կորսայ և այնպիսի որկրամոլովթեամբ կուտէ, որ ոսկոռին մէկը կոկորդին մէջ կը մնայ: Շատ կաշխատէ որ մէկ հնարքով հանէ կոկորդէն այն ոսկոռը բայց չի կրնար. ուստի ճարահատեալ քովի կենդանիներուն ու թռչուններուն օդնութիւնը կը ինդրէ, և ոտքով ու պոչով կաղաչէնոցա որ ազատեն զինքն այն վերահաս մահուանէն: Յառչոց մէջէն կոռւնկը՝ գայլին խեղճութիւնը տեսնելով իւր երկար կտուցը գայլին բերանը խօթեց ու կոկորդին մէջէն ոսկոռին կտորը հանեց: Գայլը վտանգէն ազատեցաւ, իսկ կոռւնկը փոխարէն ուղեց իրեն արած բարեացը:

(1) Աշրամ, ճամփուննա,



ԳԱՅԼ ԵՒ ԿՈՅՈՒՆԿ (Էլ. 106).



„Փոխարէ՞ն, կամչեց ծաղրելով անօրէն գաղանը.  
Հապա կտուցդ ու յիմար դլուխդ որ բերնէս  
ողջ դուրս թողուցի՛ փոխարէն չէ՞ քեզի, ապեա-  
րախտ; Գնա, գնա՛, կրկնեց գայլը, ու փառք  
տուր Դիոսին որ տակտին մեռած չես“։ որով  
ստուգուեցաւ այն առածը թէ

„Ի՞նչ որ անես ապերախտին,  
Ի՞նչ չերեփիր իւր ծակ աջքին“։

Իսկ ապերախտ տղոց համար իմաստունին  
մէկն ասաց. „Իւր հօրն ու մօրը դէմ ապե-  
րախտ գտնուող տղայն՝ հրէշ (۱) է, իսկ հայ-  
րէնեաց կամ ազգին դէմ ապերախտը—գա-  
զա՞ն“։

Այս պատճենը այս պատճեն սմասի  
ու ամբողջ այս պատճենը ամբողջ ամբողջ պա-  
տճենը միայն ըստ 62.

ԱՅԴԱՆԻՒՆ ՏԵԿԻ ԽՈԶՔԻ ՆԻ ԱՅՃԱՆԻՒՐԱՅ



Մէկ հաստ կաղնիի ծառի տակ այնքան կա-  
զին կերաւ անկուշտ խոզին մէկը, որ փորի  
ծանրութենէն պառկեցաւ ու տրքտրքալով  
քուն եղաւ; Չարթելէն յետոյ աչքովը մի-  
անգամ վեր նայեցաւ ու սկսաւ կաղնիի ծառին  
տակը փորել։

(۱) Կուծանա, ցրծե.

„Խնչո՞ւ ծառին արմատները կփորես, ասաց  
վերէն ագռաւը, մի՛թէ չդիտե՞ս որ աղով ծառը  
կչորնայ:

—Թող չորնայ, պատասխանեց խողը. այդ  
ծառէն ինձ ի՞նչ օգուտ: Ինձի կաղին պէտք  
է միայն, կաղին... կաղիննէ ինձ գիրցընողը,  
այդ ծառին ծաղկիլն ու չորնալը ամեննեին  
նշանակութիւն չունի ինձ համար“:

Երբ այս խօսքերս լսեց կաղնիի ծառը,  
համբերութիւնը հատաւ, ու դարձաւ ասաց  
խողին թէ „Ով ապերախտ կենդանի, ինչո՞ւ  
այդպէս անհեռատեսութեամբ դատելով կը  
մնասես ինձի. լաւ չէ՞ր լինիր որ միանգամ  
այդ կոպիտ գլուխդ վեր վերցընէիր ու անկուշտ  
աչքերովդ տեսնէիր, որ այդ քեզի գիրցընող  
կաղիններն իմ՝ վերաս կրուսնին“:

Տգէտ մարդը՝ կոյր ու ապերախտ կլինի,  
որով թէ ուսումնականներուն և թէ ուս-  
ման սէր ունեցողներուն ոչ միայն կարճատե-  
սութեամբ բանի տեղ չի դներ, այլ և շատ  
անգամ կաշխատի մնաս տալ նոցա այն խողին  
նման, չդիտնալով որ ուսման օդտաւէտ պտուղ-  
ներէն ինքն ալ կվայելէ:

: Հայոց պատմութեամբ

## 63.

ԱՃԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՓԵԿՈՐՈՒԹԵԱՆ ՕԴԱԽՏՆԵՐԵ:

**Վ**ստուած մարդուս ասաց, կասէ փիլիսոփային մէկը, դուն աշխատէ որ ես ալ քեզի օգնեմ:

**Ե**նգործութիւնը սրտնեղութիւն ու թշուառութիւն կըերէ, և մարդուս կեանքը կկարճեցընէ:

**Ե**նգործութիւնը ժանդի կը նմանի, որ բանելէն աւելի կմաշեցընէ մարդուս կեանքը:

**Ե**մենայն օր գործածուած բանալին, փայլուն կլինի:

**Պ**էտք եղածէն աւելի քնանսալ ուզողը՝ վնաս կանէ. վասն զի քնացող աղուէսը հաւ չէ կարող որսալ:

**Պ**արապութիւնը սիրողին ամեն բան դժուար կերևի. իսկ աշխատել սիրողին—դիւրին:

**Խ**րիկունը կանուխ պառկեն ու առաւոտուընէ կանուխ ենելը՝ թէ առողջութեան օգուտ է, թէ ապրուստի և թէ խելքի:

**Ե**ռաւօտեան կանուխ ել, որ արևն աշխարքիս վերայ ծագած ժամանակը՝ ծոյլ մարդոց պէս քեզ պառկած չը դանէ:

**Դ**ուն խանութդ պահէ, որ խանութն ալ քեզ պահէ:

**Ե**թէ փող վաստակել կուզես՝ գործիդ գլուխը դուն կեցիր, իսկ եթէ չես ուզեր՝ ուրիշ զեկէ:

Բանւորներու գլխուն վրայ չկեցող աղան, իւր քսակին կառավարութիւնը նոցա ձեռքը տուած հաշուելու է:

Մանր բաններու վերայ ևս անհօգութիւն անել պէտք չէ. վասն զի շատ անդամ փոքրիկ անհօգութենէն մեծ մեծ վասաներ պատահած է: Ինչպէս զոր օրինակ. ձիուն ոտքի գամը չգամուելով՝ նալը կընկնի, նալին ընկնելով՝ ձին ոտքը կցաւցընէ, որով ձիաւորը թշնամիին ձեռքէն փախչել չկարողանալով՝ կըսպանուի. բայց թէ պատճառը հարցընես,— մէկ գամի համար իւր ժամանակին անհօգութիւն անելն է:

Հարստանալ ուզողը միայն վաստակելը սովորելու չէ, հապա վաստակն ինչպէս գործածելու է, այն ևս սովորելու է. վասն զի Սպանիացիք թէ որ Հնդկաստանը առնելէն յետոյ ևս չըկրցան հարստանալ, պատճառն այն էր, որ իւրեանց արած ծախքը վաստակներէն շատ աւելի էր:

Եշխատութեան մէջ ոտքի վերայ կեցած ուամիկ մարդը, նստող ազնուականէն մեծ է:

Եպրուստի համար աւելի գանգատ անողներն այնպիսի մարդիկ են, որք իւրեանց հօրենական հարստութիւնը գործածել գիտցած չեն: Եյնպիսեաց համար է որ կասեն,, ջուրին յարդը, ջրհորին չորնալէն վերջը կիմացուի»:

լավագայակա՞ն ոչ լսդի մասնելուսաղա՞ն գոյն  
64.  
ամիջառու ու մշտական ելութեասաց վճան դա  
ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ.

**Հպարտութիւն** ասելով՝ կիմանանք այն  
անկարգ անձնասիրութիւնը, որով մէկն ու-  
րիշներէն աւելի իրաւունք սեպհականելով իրեն,  
ուրիշներէն վեր ստեղծուած կհամարի ինքզինքը:  
**Հպարտ** մարդը առհասարակ կատարելութենէ  
զուրկ կլինի. թէ որ ընկերութեան մէջ մտնի,  
էսով կըսկի խօսքը՝ էսով կվերջացընէ. „Յա այդ  
բանին շատ խորունկը գիտեմ, կասէ. իմ ա-  
սածու է. ինձմէն հարցուր. դուն դեռ ինձի չես  
ճանաչեր. ինձ այսպէս մարդ կասեն՝ գիտե՞ս,  
և այլն: Թէ որ խօսքը կատարելութեան վերայ  
լինի, ինընիրեն օրինակ կրերէ. իսկ եթէ պա-  
կասութեան, —իսկոյն ինքնիրեն դուրս կհանէ  
մէջէն „Փառք Խստուծոյ, որ ես այդ պակասու-  
թիւնը չունիմ“ կասէ:

**Հպարտը** իւր ցեղին վերայ կպարծի, որ ոչ  
թէ առաքինութիւն է, այլ առաքինի լինելու  
պարտականութիւն. վասն զի եթէ ցեղին հա-  
մեմատ առաքինութիւն չունենայ, կնշանակէ  
իւր ցեղի ազնուականութիւնը իրմով կվերջանայ.  
բայց ինքը կծիծաղի վար ցեղէ եղողներուն  
վերայ, որք շատ անդամ իրմէն աւելի արժա-  
նաւորութիւն ունին:

Եւր հարստութեան վերայ կը հպարտանայ,  
որ մոքի կատարելութիւններուն ու առաքինու-  
թեանց հետ և ոչ կարող է համեմատուիլ չբգի-  
տեր որ առաքինութիւն չունեցող հարուստը  
սակիով բեռնուած անասունի կը նմանի:

Եւր իշխանութեան վերայ կը հպարտանայ՝  
ուզելով որ իւր ամեն խօսքը պատգամի տեղ  
ընդունուի. և թէ որ պատճառը հարցընես,  
„Պատճառը՝ իմ հրամանս է“ կասէ:

Ո՞ր և իցէ լաւութիւն անելու համար հազար  
աղաջանք ու պաղատանք կուզենայ. թէ որ  
ոտքը չընկնիս՝ ինդիբքդ չի լսեր, կարծես թէ  
ականջը ոտքին վերան է:

Հպարտն իշխանութեան համնելուն պէս՝  
իւր վար աստիճանի բարեկամներուն բարեելը  
ամօթ կհամարի իրեն, և շատ անգամ այնպէս  
կցուցընէ, որ իրը թէ չճանչնար նոցա: Իարձը  
տեղ մի ելնողի պէս՝ վարի կեցողները փոքրիկ  
կերևնան իւր աչքին, չի մտածեր որ վարի կե-  
ցողներուն ալ ինքը փոքրիկ կերևնայ, ինչպէս  
որ հետագայ առակէն կտեսնուի:

Եթեաւ մի լամազ մայն ելու առաջաւ առաջաւ  
լամազ յանձն իմերի լուս ելու առաջաւ առաջաւ լուս դոյլ  
մասնաւուն ձբց բախումիւն ու զարդ պատի ըստ  
անելու ձբց մաս մայն նու բայց զարդ պատի

65.

(ԸՆԱԿ) - ՄՐԳՅԵԿԱ

Արքիւն մի կար բարակիկ,  
 Ահջըը թելիկ՝ սարը կարծիկ.  
 Զգիտեմ խելքին ի՞նչ փըշեց.  
 Խիստ բարձրերէն բալել ուղեց.  
 Վազեց վազեց հեալէն  
 Ելաւ ինչուան մինարէն.  
 Վերէն վար որ նայեցաւ,  
 Ռօ՛, անոնք ի՞նչ են լսաւ,  
 Հողի, այն ձին չէ՞ մի սա,  
 Որ երեկ դաշտը տեսայ.  
 Զըսե՞ս, ես կըլը եմ եղեր,  
 Որ մէկ սպահ առաջ խարուել  
 Ու այդպէս խեղձ ճըմինելն  
 Մէկ մէկ հըսկայ եմ կարծեր:

Հպարտը շատ քիչ անգամ մարդու կհաւնի.  
 Հաւնած ժամանակն ալ իւր կարծեացը յարմար  
 խօսելուն համար կլինի: Ով նորա կարծեացը  
 դէմ մտածէ կամ խօսի, որչափ ալ իրաւունք  
 ունենայ՝ անխելք կերեի իւր աչքին: Թէ որ  
 յանկարծ ուրիշը մէկ խելօք բան խօսի, իսկոյն  
 „Մտքէս անցաւ, բայց չզրուցեցի“ կասէ:  
 Չերկընցընեմ, հպարտ մարդը, մանաւանդ ան-  
 կիրթ հպարտը փշուած տիկի կը նմանի, որ  
 ոդը պարպելուդ ողէս՝ կաշեի կտոր կը մնայ:

## 66.

(ԱՅԼԱԿ) — ՔԱՂԱՔԱՑԻ ԽԾՈՒԿՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻ ԷՇԵՐ.

Ո՞ւ էկ վարժապետ մի էշ ուներ  
Ոլոռն վերայ միշտ կը հեծներ,  
Ու դաս տալու երրոր ըլլար՝  
Ուսումնարան անով կերթար,  
Ու դըրան քով  
Կապէր սանձով:  
Եյսպէս կըռնակն իւր իմաստուն  
Մարդ մի տանել ու բերելուն  
Ու վարժատան  
Ուսմանց դըրան  
Եմենայն օր ալ կապուելուն,  
Պարոն իշուկ միաքը դըրաւ  
Որ իմաստուն մ'ալ ինքն եղաւ:  
Մեր վարժապետն աղւոր օդով  
Օր մի իջաւ գեղ իւր իշով,  
Ու տեսնելով ի մէջ դաշտին  
Որ շատ էշեր կեցեր կարծին,  
Ելինին ալ սանձը հանեց  
Ու անոնց մէջ արձակեց:  
Եյն գեղացի էշերուն  
Ալրնանը հաւնել էշն իմաստուն:  
Մէկդի կեցեր  
,,Նըմ, հըմ, կըսէր.  
,,Եայէ ինչպէս երեսներէն  
Կերևայ որ գեղացի են.  
Ի՞նչ անշընորհք կեցուածքներ  
Ի՞նչպէս կոսկիտ շարժուածքներ,  
Եյսպէս կըսէր  
Կամօթ սեպէր,

Որ անոնց բով մօտենար

Եւ ուտէր խոտ հաւասար :

Բայց տեսնելով որ էջքն անալրդ

Չէին ձանչնար իրեն մեծ յարդ,

Յանկարծ միաքը խորհուրդ մ'ինկաւ

Ու կատարել փութացաւ .

‘Օանը ու վըսեմ քալելով

Եյն էշերուն զընաց քով .

“Երկէք ո՞վ խեղճ գեղացիներ ,

„Մըսիկ ըրէք ձառ մը” կըսէր :

Գեղացիները գըլուխնին

Եյս խրոխտ ձայնին դարձուցին

Ու ականջնին տընկեցին

Մըսիկ ըրին ակնածութեամբ ,

Ուշադրութեամբ .

Տեսան որ այն քաղքըցին ալ

Իրենց պէս լաւ զիտէ զըռաւ ,

Եւ ոչինչ այլ :

Իրենք ալ ձայն վերուցին

Ու զըռզըռոց վըրցուցին .

Տեսաւ իշուկն որ իրեն

Կոքա մըսիկ ընել չուղեն ,

Կատաղութեամբ բըռնադատ

Եյսպէս զուեց յուսահատ .

„ԵՇ դուք , մարդ չէք ,

Դուք էշ էք” :

Գեղացւոց մէկը չըդիմացաւ .

‘Աղա , ըսաւ

Եյն չէ բայց ի՞նչ ըսել կուղես


Ի՞նչ . ականջներդ մոռցե՞ր ես :

Որչափ տեսել եմ այսպիսի անխելք մարդիկ

Որ ինքինքնին մեծ բանի մի տեղ զընելով ,

Դիմացինին կարհամարհեն իրեն ռամիկ

Ու իշուկին պէս կը լըմննան՝ ծաղը լինելով :



67.

## ՏԻԿԱՑԻՔ (1).

Ասիոյ ժողովրդոց մէջ ամենէն կրթեալը  
կհամարուին Զինացիք: Գիրք տպելը, վառօտ<sup>(2)</sup>  
շինելը, կողմնացոյցը<sup>(3)</sup> եւրոպացիներէն շատ  
տռաջ ծանօթ եղած է իրենց բայց նոցա երկ-  
րին դիրքը, օրէնքն ու օտարուաի սովորու-  
թինները թողուցած չեն օտար ազգաց հետ  
ծանօթանալու, որով քիչ ժամանակուայ մէջ  
յետ մնացին եւրոպացիներէն: Այս յետամնա-  
ցութիւնը իրենց ալ զգալի լինելով՝ ասկէց  
քսան տարի յառաջ սկսան թողցընել եւրո-  
պացի քարոզիչներուն քրիստոնէական կրօնքը  
տարածելու. իսկ ուսումնականներուն, — հետա-  
զոտութիւններ անելու տէրութեան ներսերը:

Զինացիք իւրեանց թագաւորութեան սկիզբը  
ասկէց 5000 տարի տռաջ կհաշուեն:

Զինացւոց երկիրը մեծութեան կողմանէ՝  
Ոտոսաց երկրէն յետոյ, երկրորդ տեղը կը ըսնէ՝

(1) Կատակմ.

(2) Պօրօն, բարոն.

(3) Կոմած.

աշխարհիս վերայ. իսկ բազմամարդութեան կողմաննէ—առաջին տեղը. վասն զի 420 միլիոն ժողովուրդ կհամարուի բոլոր Չինաստանի մէջ:

Չինացւոց ամենէն գլխաւոր, միանդամայն և պատուաւոր պարապմունքը՝ Երկրագործութիւնն է: ‘Խոցա կայսրը ինամակալ կհամարուի Երկրագործութեան. իսկ կայսրուհին—ինամակալուհի շերամադարմանութեան’<sup>(1)</sup>: Խորեանց հին սովորութեանը համաձայն տարին մէկ անգամ կայսրն ու նորա պաշտօնատէրները բահը ձեռքերը կառնեն ու քիչ մի տեղ հողը կփորեն և բրինձ կցանեն. նոյնպէս և կայսրուհոյն պարտաւորութիւն կհամարուի ամեն տարի քանի մի շերամի բոժոժ մեծցընելու:

Չինաստանի մէջ կշինեն նոյնպէս յախճապակէ ամենաբարակ ամաններ<sup>(2)</sup>, պատուական ներկեր ու թանաքներ, բամբակ և գրելու թղթեր. բայց իրենց արտաքին գլխաւոր առուտուրը չայի փոխանակութիւնն է, որ Ոտուսաց հետ կանեն ցամաք ճանապարհով Վայմաչին և Աեախտա, իսկ Ենգղիացւոց հետ ծովով կանտոն և Շանխոայ քաղաքներուն մէջ:

Չինացւոց գլխաւոր կառավարիչն է կայսրը որ „Արդի Երկնից“ կհամարուի. այս պատճառաւ կայսեր անձը սուրբ և անմերձենալի է. և

(1) Покровительница земледелия.

(2) Фарфоровая посуда.

թէպէտ նորա հրամանը երկնային պատգամի տեղ կընդունուի, բայց իրենց հին օրէնքին ու սովորութեանց համաձայն՝ նա նշանաւոր բանի ձեռք չի դարներ առանց նախարարաց և ուսումնականաց իորհրդին:

Եյժմեան կայսրը Փէքինի մէջ կը բնակի, յորում շ միլիոն բնակիչ կայ. իսկ առաջուան կայսրները Վանքինի մէջ կը նստէին:

## 68.

21ՆԱՅԻՈՑ ԾԱՌԱԾՄԻՐՈՒԹԻՒՆԸ.

ՅՈՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ Զինաց աղզին մէջ ոչ միայն բնութեան բերմունք և պատշաճողութեան պարտք համարուած է, այլև իրրե մէկ կրօնքի պարտաւորութիւն և կամ մէկ հաստատուն պատուէր: Զինաց գլխաւոր կառավարութեան ամենէն մէծ կազզ ծնողասիրութիւնը կարող է համարուիլ, և իրեն ուժին ու այսչափ երկար ժամանակ դիմանալուն ամենամեծ պատճառներէն մէկը: Կարող ենք ասել թէ ծնողասիրութիւնը Զինաց թագաւորութեան հոգին է, ինչպէս որ հայրենեաց սէրը հին ժամանակուայ հասարակապետութեանց հոգին էր: Եյշ գեղեցիկ սիրոյ զգացմունքը տարածուած լինելով Զինաց երկրին մէջ, թագաւորը իւր հպա-

տակներուն վերայ՝ իրրեւ բուն իւր որդւոց վերայ կնայի, և հպատակները թագաւորին՝ իրրեւ իրենց հօր վերայ:

Չինաց թագաւորները ծնողասիրական պարտուց օրինակ տալու համար, իրենց հօր աթոռը չեն նստիր, մինչև որ նոցա մահուան սուզի ժամանակը չը լմբնցընեն, որ երեք տարի կը քշէ. և նոյն միջոցին մանդարիններու<sup>(1)</sup> խորհրդարանը կկառավարէ տէրութիւնը:

Թագաւորը բոլոր իւր հպատակներուն օրինակ պիտի լինի՝ թէ կրօնական պաշտամանց և թէ իւր մօրը որդիական պարտուց մէջ, որոյ մեծարանաց հանդէսը ամեն տարեդլխուն մամնաւոր հանդիսով կկատարուի, հետազայ կերպով:

Տարւոյն առաջին օրը՝ առաւօտը արեւը ծագելուն պէս՝ բոլոր մանդարինները հանդէսի զգեստներ հագած կժողվուին թագաւորին պալատը, և իրենց պատուոյն աստիճանովը դրսի սրահին մէջը կշարուին. յետոյ թագաւորական իշխանազունքն ալ բոլորը հագուած կուզան նոյն տեղը, և թագաւորն իւր աթոռին վերայ նստեցուցած՝ սենեակէն դուրս կհանեն որ տանեն իւր մօր սենեակը՝ նոր տարին շնորհաւորցընելու համար. դաւիթը ժողվուած հանդիսականներն ալ նոցա հետը մէկտեղ կերթան:

(1) Տերութեան գլխաւոր պաշտամատէրներ.

Երբ կհասնին թագաւորամօր սենեակին դրսի  
սրահը, թագաւորն ամոռուէն վար կիջնայ և  
ոտքով կերթայ նոյն սրահը։ Այս միջոցին  
մանդարիններու մէջէն արարողապետը<sup>(1)</sup> ներս  
կը մտնէ և թագաւորի մօր առջեր ծունկչողած՝  
թագաւորին կողմանէ աղաչանաց թուղթ մի  
կուտայ, որ յանձն առնու դուրս ելնելու իրեն  
դիմաւորողներն ընդունել։

Թագաւորամայրը հանդիսով դուրս ելնելէն  
յետոյ, արարողապետը կերթայ թագաւորին  
առջե ծունկի վրայ կուգայ և կաղաչէ որ երթայ  
խր մօրը որդիական պատիւր տայ։ Այսուհետեւ  
թագաւորը շիտակ կեցած ու ձեռքերը վար  
թողուցած կներկայանայ մօրը՝ իւր բոլոր հան-  
դիսականներովը, որով երգիչները կակսին քաղցր  
ու սրտաշարժ երգեր ասել։

Երգերն աւարտուելուն պէս՝ արարողապետը  
մէկէն կկանչէ „Օունկ չողեցէք“, և իսկոյն  
թագաւորը, մանդարիններն ու իշխանները  
ծունկ կչոգեն. այսպէս քիչ մի կենալին յետոյ՝  
արարողապետը դարձեալ կկանչէ. „Ոինչե  
գետին խոնարհեցէք“, և ամենքը դիմացնին  
նայելով վար կը ծոփին. յետոյ դարձեալ „Ելէք“  
կկանչէ, և ամենքը ոտքի կկանգնեն։ Այսպէս  
երեք անգամ ծունկ կչոգեն, կը ծոփին ու կելնեն։

(1) Պերոմայմեյսեր։

Եյտուհետեւ արարողասպետը՝ թագաւորին մօրը աղերսաղիր մի կուգայ աղացելով որ իւր սենեակը դառնայ, որով նուազածուներով կերթայ թագաւորամայրը և հանդէսը կվերջանայ:

Եյտ նոր տարուայ հանդիսէն զատ՝ թագաւորի պարտականութիւնն է հինգ օրը մի անգամ իւր մօրը այցելութեան երթալ:

## ՅՅ.

ՏԻՎԱՑՑԻՑ ԾԱՆՈՂԱԾՄԻՐՈՒԹԵԱՆ ՊԵՐԱՑ ՀԱԲԵՇՆԵՐ.

ՅՕՆՈՂԱՍէր որդին իւր սրտին մէջ որդիական սէր կըզգայ. իւր ծնողաց ձայնը կը լսէ՝ զեռ նոքա չխօսած, և նոցա կտեսնէ՝ թէն նոքա իւր առջեր չինին:

Հօր իսօսքը կատարելու համար, լաւ որդին պարտական է իսկոյն ամեն բան թողուլ ու երթալ:

Որդին առանց նայելու իւր հօր և մօր պակասութեանցը, պարտական է պատուել և ամենայն ջանքով նոցա պակասութիւնները ծածկել:

Եմեն շարիք գէշ որդիլինելէն կըսկսի:

Որ տղան որ իւր որդիական պարտուց վերայ չի մտածիր, նորա ամենայն առաքինութիւնները վտանգի մէջ կհամարուին:

Այս բանը որ որդիական պարտուց կը վնասէ,  
հասարակաց կը վնասէ։ Եւր ծնողքը պա-  
տուղը, ինքնիրեն պատռած կլինի. իսկ իւր  
ծնողքն արհամարհողը՝ ինքնիրեն անպատի-  
արած կլինի։

## 70.

ՏԵՇԱՑԻՑ ՈՒ ՄԵՐ ՍԱՎՈՐՈՒԹԵԱՆՑ ՏԵՐԻԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ.

Չինացիք կկարծեն թէ մոքի զործարանը  
փորն է. իսկ մենք կկարծենք թէ զլուխն է։

‘Եռքա ձախ կողմը պատռաւոր կսեպէն,  
մենք—աջը։’

‘Եռքա կանանց ոտքը ընդդէմ բնութեան  
կը սխմեն ու մանր կպահէն գեղեցկութեան հա-  
մար, արևմտեան քանի մի աղգերն ալ մէջքերը  
սխմելով կբարակցընեն, նոյնպէս գեղեցկութեան  
համար։’

‘Եռքա վրայի կամ դրսի հագուստները շուտ  
շուտ կփոխեն. իսկ մենք—տակի կամ միջի  
հանդերձները։’

‘Եռցա սուգի նշանն է ճերմակ գոյնը, իսկ  
մերը—սև գոյնը։’

‘Եռցա մէջ որբեայրի կինը իւր մեծ որդուն  
հնազանդ պիտի լինի, իսկ մեր մէջ տղան մօրը  
պիտի հնազանդի։’

‘Յոքա մանր տղաքը կշալկեն, մենք—կը զրկենք:

‘Յոքա երբ բարեկամի դիմաց ելնելով բարեել ուզենան, բռն իսկ իրենց երկու ձեռքը իրար կկապեն ու կթօթուեն. իսկ արեմուեան ազգերը իրարու ձեռք կը բռնեն ու թօթուեն:

‘Յոքա գինին տաք կը խմեն, բայց մենք—պաղ: Ընդ հակառակն՝ նոքա չայը պաղ կը խմեն, իսկ մենք—տաք:

‘Յոքա աջ կողմէն դէպի ձախոր կկարդան, իսկ մենք—ձախ կողմէն դէպի աջ:

‘Յոքա իւրեանց զլիսուն զագաթը քիչ մի մազ կթօղուն, և այն՝ մուկի պոչի նման ետենին կկախեն. իսկ մենք—կարճ մազ կը ձգենք:

‘Յոցա մէջ հազարաւորներ կմեռնին քիչ ուտելէն և խմելէն. իսկ մեր մ.ջ կմեռնին չափէն աւելի ուտել-խմելէն:

‘Յոքա օձը կպաշտեն, իսկ մենք կսատկեցընենք:

‘Յոքա մեռած մարդոյ մարմինը կայրեն, իսկ մենք—պատուով կթաղենք:

71.

ՊՈԼԵՒՆ ԹԱՅԻՆԵՐԸ:

Ճամանակով մէկ զառամեալ (<sup>1</sup>) ծեր կար, որոյ աչքերը ծերութենէն սաստիկ տկարացած էին, ոտքերը թուլացած ու ականջները զրեթէ: Կերակուրի նստած ժամանակը հաղիւ կկարողանար բռնել դգալը, ուստի և շատ անդամ արգանակը (<sup>2</sup>) բերանը դնելու ժամանակ կը թափթրփէր սեղանի սփռոցին վերայ: Այս պատճառաւ որդին ու հարսը զզուելով իրմէն, տան մէկ անկիւնը վառարանին մօտ տեղաւորցուցին զինքը, ուր կերակուր կուտային իրեն մէկ հին կաւէ ամանով (<sup>3</sup>):

‘Օ երուկին աչքերէն շատ անդամ արտասուք կթափուէր, և նա վշտացած կնայէր դէպի կերակուրի սեղանը: Վիանգամ, չգիտեմ ինչպէս եղաւ, այն կաւէ խոր ամանը, որ դժուարութեամբ կը բռնէր նա, ընկաւ ձեռքէն ու կտոր կտոր եղաւ: Վատաղահաս հարսը յանդիմանեց այն դժբաղդ ծերին դանաղան խօսքերով և նա չհամարձակեցաւ պատասխանել, այլ միայն սրտանց հառաչեց ու զլուխը կախեց: Այսուհետեւ որդին մէկ փայտէ աման գնեց, որով ամեն օր կերակուր կուտային:

(1) Ճրախան. (2) Բալիօն. (3) Գլուխաց ոսудա.

Եյս զիապուածէն յետոյ քանի մի օր անց-  
նելով՝ ծերուկին որդին ու հարսը տեսան որ  
իրենց չորս տարեկան որդին, գետնին վերայ  
նստած տախտակներ կշարէ մէկմէկու քով:  
„Ի՞նչ կանես, հարցուցին նորա.— Չեղի համար  
փայտի աման կը շինեմ, պատասխանեց նա,  
որ ձեր ծերութեան ժամանակը նորա մէջ կե-  
րակուր ուտէք“:

Վարդն ու կնիկը լուռութեամբ մէկմէկու երես  
նայեցան ու արտասուցան . և այն օրէն սկսան  
առաջուան պէս իրենց սեղանակից անել վշտալի  
ծերին և միւսանգամ նորա սիրտը չցաւցուցին:

## 71.

(ԱԲՇԱԿ) — ԾԵՐ ԵՒ ԵՐԵՔ ՊԱՏԱՆԻՔ.

‘Օկերուն մէկը ծառ մը արնկելու հետ էր .

‘Վըրկիցներէն երեք հասուն կըտրիձնիր

‘Օքիծաղելով մեր ծերունոյն մօրուքին

‘Դարձան իրեն այս ըսին,

‘Եյդ տարիքիդ մէջ ալ դուն ծառ կը արնկու,

‘Վինչդի ռաչըրդ դուրս կընայի աշխարհէս .

‘Ենք շինէիր ինչ և իցէ ,

‘Եր ծառ արնկելով ո՞րն է .

‘Երկու հարիւր տարի պէտք է դուն տպրիս ,

‘Որ այդ արնկած ծառէդ տըսուղ մը շահէս .

‘Զէ նէ՞ մի այնպէս միաք ունիս , ոպագա .

‘Որ դուն ալ դառնաս նոր Վաթուսազա :

Մէկդի՛ ձրգէ , ծերուկ , մէկդի այդպիաի աշխատանքներ .  
Էնչուդ պէտք են այսուհետեւ հեռու հաշիւներ .  
Մէկ սահման մ'ալ ապրելը ուսկի՞ց յայտնի է քեզի .  
Ետր բաներու ձեռք զարնելը մեղի ձրգէ դուն , մեզի .

Վենք դեռ կէնք ենք , ծաղկահասակ և ուժեղ .

Վակ կը մընայ վընտուել քեզի թաղման տեղ :

— Ո՞վ բարեկամք իմ , ըստ բաղցրութեամք ծերուկը անոնց ,  
Ես աշխատանքի վաղուց սովորած եմ այսպէս պըցտիկուց .

Եւյն թողունք , ես բանի որ միտք կընեմ  
Ուէ ինչ բանի որ ձեռք զարնեմ

Պլատղը ես միայն վայելու չեմ :

Աշխատանքէս , հաւատացէք , աւելի ալ համ կառնեմ :

Ո՞վ որ տէր է բարի սրբափ ,

Միթէ պէտք է որ միշտ իրեն շահուն համար աշխատի .  
Ես այս ծառը աղնկելով ուրախութիւն մը ունիմ ,  
Որ թէ որ ես սորա շուքին ատակ նըստելու չըհանիմ ,  
Իմ թոռը կը վայելէ այն շուքն իրեն ատենին .

Եւ այս ինձի համար զիտէք ինչ պըտուղ է թանկազին :

Եւս ալ կայ որ հիմկուց ըսել ո՞վ կըրնայ

Ուէ մեղնէ ո՞րը առաջ կամ յետոյ ո՞րը կերթայ :

Միթէ մահը կը նայի պատանութեան կամ ուժի ,

Կամ զեղեցիկ երեսի :

Ե՞՞ս , ես մինչեւ այս տարիքըս ո՞րքան սիրուն աղջիկներ ,  
Ե՞՞նչ քաջ ուժով կըարիճներ զերեզման եմ յուղարկեր .  
Ո՞վետէ , ձեր առենն ալ զուցէ , բան զիմն մօտիկ է ,  
Եւ զուցէ թէ սեւ հողը բան զիս առաջ ձեզ ծածկէ :

«Օքերուկն ի՞նչպէս որ ըստ , այնպէս ալ կատարեցաւ .

Պատանիներէն մէկը՝ առուտուրի պատճառաւ .

«Եսով հեռու երկիրներ երթալու ձամբան բըռնից ,

Շաղցը մեծ մեծ յոյսերով զինքը երկար խարիսքեց ,

Յետոյ մէկ փոթորիկով զարկաւ նաւը խորակեց

Ուէ կըարիճը՝ թէ յայսերը ծովուն յատակն ընկըզմեց :

Վիւսը օտար երկրի մէջ պաշտօն զըանելու մրտքով,  
 Շըռայլ անզուսադ վարմաննքով  
 Վուաջ կորսընցուց առողջութիւնը,  
 Եւ յետոյ զընաց ի մահուն տունը:  
 Իսկ երլորդը տաք ասեն  
 Վաստիկ օղի խըմելէն  
 Հիւանդացաւ պառկեցաւ  
 Ծըժիշկներու ձեռք ընկաւ.  
 Ա արպետ էին բըժիշկները. բայց ճար մ'ընել ձըկըրցան,  
 Ու ճամբեցին գերեզման:

Երբոր նոցա մեռածը՝ բարի ծերուկն իմացաւ,  
 Եյն իրեքին վըրան աւ շատ կըսկըծաց ու լացաւ:

## 72.

ՄԵՌԱՆ ՆԵՐՍԻՆ:

Առերբ Գրիգոր Լուսաւորչի թոռան թոռն  
 էր մեր սուրբ Կերսէս Վեծ հայրապետը. այս-  
 ինքն սուրբ Արքանիսի Յուսիկ որդւոյ՝ Եմա-  
 նագինէ որդւոյն զաւակն էր: Վանկութեան  
 ժամանակէն իւր Յուսկան պապուն ձեռքին  
 տակը մեծնալով՝ Ըստուծոյ երկիւղն ու սէրը  
 հիմն դրած էր Կերսէս իւր դաստիարակու-  
 թեանը, որով և ամենայն հարկաւոր գիտու-  
 թիւնները, մանաւանդ յունարէն լեզուն և  
 աստուածային գրոց տեղեկութիւնները մեծ յա-  
 ջողակութեամք սովորեցաւ Անսարիոյ դպրոց-  
 ներուն մէջ: Յետոյ Կոստանդնուպոլիս գնաց  
 ուսմունքը կատարելագործեց, և զանազան ա-


ուարինութիւններով այնպէս պայծառացաւ ու սիրելի եղաւ ամենուն, որ Վապիսնէս անունով երևելի իշխանին փեսայացաւ, և մէկ որդի ունեցաւ՝ որ է սուրբ Սահակ Պարթև:

Փառներսէն կաթողիկոսի վախճանելէն յետոյ՝ մեր Վրշակ երկրորդ թագաւորին հրաւիրանօքը կաթողիկոս օծուեցաւ 364 թուականին, և ձեռք զարկաւ ամենայն կողմանէ բարեկարգելու եկեղեցին. շատցուց ընտիր և գիտուն եկեղեցականները, լաւ գիտնալով որ նոցա տգիտութեամբը կկորսուի ազգն ու եկեղեցին, և նոցա ուսումնականութեամբն ու բարեկրթութեամբը կպայծառանայ և առաջ կերթայ:

